

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Սիսակն այստեղ
բնակվելով աշխարհն
իր անունով
կոչում է Սյունիք...
Սովսես Խորենացի



Զանգեզուրի պղնձամուլիբդե- նային կոմբինատի անբացադրելի նահանջը

Խոշոր հարկատուների ցուցակը եղել է
մնում է յուրօրինակ բարոմետր հանրապե-
տության տնտեսվարող սուբյեկտների գործու-
նեության արդյունավետությունը եւ շահավե-
տությունը գնահատելու համար:

Տարիներ շարունակ Զանգեզուրի պղնձ-
մուլիբդենային եղել է ոչ միայն թիվ 1 հարկա-
տուն Հայաստանում, այլև պետությունը ամե-
նաշատ հարկ վճարող ընկերությունը: Մաք-
սիմ Հակոբյանի ղեկավարման տարիներին,
ասենք 2013-ին, ընկերությունը պետությանն
էր վճարել 37.9 մլրդ դրամ, 2012-ին՝ 31.7 մլրդ
դրամ:

Հետո եկավ ավազակախումբը. մոտ երեք
անգամ ավելացվեց հանքանյութի արդյու-
նահանունը՝ առանց Արծվանիկի պոչամբարի
հնարավորությունները հաշվի առնելու, բայց
զգալիորեն պակասեցվեց վճարվող հարկերի
չափը:

2016-ին, օրինակ, 29 մլրդ դրամով պակաս
հարկ վճարվեց պետությանը, քան 2013-ին:

Եվ 29 մլրդ դրամով պետական հարկերը
մեկ տարում պակասեցնելու «սխրագործու-
թյան» համար Վահե Հակոբյանը նշանակվեց
Սյունիքի մարզպետ, իսկ Սիեր Պոլոսկովը
ստացավ «Անանիա Շիրակացի» մեդալ:

2017-ի արդյունքներով կոմբինատը շարու-
նակեց հեռու մնալ այն բնագծից, որ նվաճել
էր Մաքսիմ Հակոբյանը. պետությանը վճար-
վեց 18.7 մլրդ դրամ (2013-ին վճարվածի կեսի
չափ):

Հիմա ընդունված է պատճառաբանել, թե
դա պայմանավորված է եղել բացառապես
Լոնդոնի մետաղների բորսայում գունավոր
մետաղների գների անկմամբ, ուրիշ պատ-
ճառներ իբր չկան:

Գները, իհարկե, որոշիչ են նաեւ այս
դեպքում: Սակայն, կրկնենք, գների անկմա-
նը զուգահեռ մոտ երեք անգամ կոմբինատի
սկզբնական հզորության համեմատ ավելացել
է հանքանյութի արդյունահանումը:

Հետեւաբար՝ ինչպե՞ս բացատրել «Զանգե-
զուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության կողմից պետու-
թյանը վճարվող հարկերի այդչափ նվազումը:

Եվ, գլխավորը, հանրապետության մետա-
ղական հանքերում վարչապետի նախածեռ-
նությամբ սկսվող ստուգումները կտա՞ն այդ
հարցի պատասխանը, կպարզաբանե՞ն, թե
ինչպես ստացվեց, որ լեռնահանքային կոմ-
բինատի սեփականատերերի փոփոխություն
տեղի ունեցավ. ովքե՞ր էին եւ ովքե՞ր են հիմա:
Իրավիճակի մասին ամբողջական պատ-
կերացում կազմելու համար հիշեցնենք, որ
ավազակախմբի տնօրինության անցած կոմ-
բինատը հիմնականում ձեռք է քաշել մարզում
սոցիալական ծրագրեր իրականացնելու՝ պե-
տության առջև ստանձնած պարտավորու-
թյունից, ավելի է վատացրել տարածաշրջանի
բնապահպանական վիճակը, գործնականում
բոյկոտել է արդյունահանող ճյուղերի թա-
փանցիկության ապահովման վերաբերյալ
միջազգային նախաձեռնությունը՝ իրականում
դառնալով պետության պետության ներսում:

Հուշակոթող՝ հիշատակի եւ հավերժացման

Արցախյան պատերազմում 97-րդ մոտո-
րաձգային բրիգադի կազմում մեր պատմա-
կան հայրենիքի մի հատվածի ազատագր-
մանն ավանդ ունեցավ յոթերորդ հրաձգային
գումարտակը: Տեղակայված էր եւ մարտական
ուղին սկսեց Կարմրաքարից, ինչի համար էլ
կոչվեց Կարմրաքարի գումարտակ: 1993-ի
մայիսի 11-ին հիմնադրվեց գումարտակը, նրա
հրամանատար, գնդապետ Արթուր Մարտիրո-
սյանի վկայությամբ իր համար հիշարժան էր
նույն թվականի օգոստոսի 31-ը, երբ գումար-
տակը մարտական առաջադրանքով ազա-
տագրեց Կուբաքլիի շրջանը: Գումարտակն ու-
նեցավ նաեւ նահատակներ, որոնց հիշատակը
հավերժացնելու համար այն վայրից, որտե-

ղից սկսել է մարտական ուղին, կանգնեցվել է
հուշակոթող-խաչքար: Հունիսի 14-ին հավաք-
վել էին գումարտակի նախկին մարտիկնե-
րը, Արցախյան պատերազմի մասնակիցներ,
մարզային եւ համայնքային իշխանություննե-
րի ղեկավարներ, տարածաշրջանում տեղա-
կայված զինվորական ստորաբաժանումների
հրամանատարներ:

Հուշակոթողի բացման պատիվը վերա-
պահվեց Սյունիքի մարզպետ Կարեն Համբար-
ձումյանին, չորրորդ բանակային կորպուսի
հրամանատար, գեներալ-մայոր Վալերի Քո-
չարյանին, առաջին բանակային կորպուսի
հրամանատար, գնդապետ Արարատ Մելքո-
նյանին: Կապանի հոգեւոր հովիվ տեր Վա-

հան քահանա Հեբոյանը, օրհնության կարգ
կատարելով, ասաց. «Այս վայրը կդառնա մի
յուրահատուկ սրբատեղի, այստեղով անց-
նող մարդիկ ոչ միայն կհարգեն նահատակ
մարտիկների հիշատակը, այլև կլինի մի
անկյուն, որտեղ մարդիկ կհիշեն մեր հաղ-
թանակների մասին, որոնք երկար տարի-
ներ չէինք տեսել»: Ներկաները ծաղիկներ
խոնարհեցին հուշակոթողի պատվանդանին,
այնուհետեւ համդիսավարը ներկայացրեց
գումարտակի մարտական ուղին:

Հուշարձանի բացման արարողությանը
ոգեկոչման խոսքով հանդես եկավ Սյունիքի
մարզպետ Կարեն Համբարձումյանը.

էջ 3

...ԵՎ ՈԳԻՆ ԱՅՂ ԱՐՅԱՆ ՎՐԵԾ Է, ՑԱՍՈՒՄ ՈՒ ՊԱՏԳԱՄ

Հեռու-հեռավոր Շահումյանի շրջանի Թո-
ղան գյուղում, ուր հիմա թուրքն է բնակվում,
արշալույսները, այո, չգարնանաք, հայերեն
են բացվում: Հայի սաղմոս ու աղոթք է հնչում,
որովհետեւ մեր հերոս տղերքի ոգին արթուն
է այնտեղ, անմեռ, ու ոգին է այդ սաղմոս ու
աղոթք հնչեցնում: Ու ոգին այդ պատգամ ու-
նի՜ սա հայի հողն է, լավ հիշեք: Եվ ասում է
նաեւ Համլետ Մինասյանն իր որդիներին, իր
երկու թոռանը, բոլոր հայորդիներին ու նրանց
թոռ-ծոռներին...

Համլետ Մինասյանը Գորիսի տարածաշր-
ջանի Հարժիս գյուղում չի ծնվել, Հարժիսում

չի մեծացել, այդ գյուղի փողոցներում չի
չափչափել եւ ոչ էլ ծին թամբած՝ սլացել գյու-
ղի հանդ ու դաշտերում: Նրա արմատներն են
այդտեղ: Հայրը Հարժիսում է ծնվել-մեծա-
ցել, եւ ամեն պահի նրա ականջին է հասել
արմատների կանչը՝ ձգող-կանչող-ապրեցնող:
Ու երբ զգացել է, որ հայրենիքում արշալուս-
ներն արնածոր են... Արմատները ձգել-կան-
չել-բերել են Հայաստան: Եկել է, որ իր զարկն
ունենա Արցախյան հերոսամարտում:

Համլետը զինվորական էր: 1975 թ. ավար-
տելով Երեւանի թիվ 62 դպրոցը՝ գերազանց
գնահատականներով, ընդունվում է

էջ 5



էջ 4

Նոր նշանակում ՅՅ գինված ուժերի առաջին բանակային կորպուսում

ԺԻՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՊՈՍԻ ԶՐԱՍՆԱՍԱՐ ՆՇԱՆԱԿՆԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝ համաձայն Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև «Ձինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

Ժիրայր ՊՈՂՈՍՅԱՆԻՆ նշանակել պաշտպանության նախարարության առաջին բանակային կորպուսի հրամանատար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅ Ա.ՍԱՐԳՍՅԱՆ
2018թ. հունիսի 18



ԱՐԱՐԱՏ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՊՈՍԻ ԶՐԱՍՆԱՍԱՐ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝ համաձայն Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև «Ձինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի եւ 2-րդ մասի:

Արարատ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ ազատել պաշտպանության նախարարության առաջին բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅ Ա.ՍԱՐԳՍՅԱՆ
2018թ. հունիսի 18



Գորիսի պետական համալսարանում. փոթորիկ՝ ոչնչից



Արտյունյա Ղուկասյան
Գորիսի պետական համալսարանի ռեկտոր

Վերջին օրերին Գորիսի պետական համալսարանը կրկին հայտնվել է ուշադրության կենտրոնում, ընդ որում՝ աղմուկի հիմքում բուհական կյանքի համար առնչին մի դիպված է: 2010 թվականից համալսարանում իրականացվում է հայագիտական մի հետաքրքիր թեմայի ուսումնասիրություն՝ «Սյունիքի հոգեւոր եւ նյութական ժառանգությունը»:

Նախաձեռնության հեղինակը Սյունիքի այդ օրերի մարզպետ Սուրեն Խաչատրյանն էր եւ ՀՀ ՊԱՆ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը:

Եւ այդ ժամանակվանից Գորիսի պետական համալսարանում իրականացվում է հետաքրքիր ու պահանջված այդ ծրագիրը:

Թեմայի գիտական ղեկավարը յոթ տարի եղել է իրավաբանական գիտությունների թեկնածու Մարտին Ջիլֆուլարյանը, մեկ տարի՝ բանասիրական գիտությունների թեկնածու Միեր Քունունցը:

Թեմայի վերաբերյալ ամեն տարի, սահմանված կարգով, հայտ է ներկայացվում գիտության պետական կոմիտեի եւ հավանության արժանանալուց հետո ուժի մեջ է մտնում: Ծրագրված աշխատանքն իրականացնելու համար տարեկան մոտ 11 մլն դրամ է հատկացվում պետական բյուջեից: Աշխատանքներն իրականացվում է մի քանի հոգով:

Հայտը հավանության արժանանալուց հետո պայմանագիր է կնքվում ծրագրի ղեկավարի հետ, ով, ի պաշտոնե, Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Արտյունյա Ղուկասյանն է:

Սակայն հայտը գիտության պետական կոմիտեի ներկայացնելուց առաջ պետք է հավանության արժանանա, ավելի ճիշտ՝ երաշխավորվի Գորիսի պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից: Իսկ եթե լինում

են մեկից ավելի հայտեր, ապա դրանք համեմատվում են ու լավագույնին նախապատվություն տալիս:

Եվ որպեսզի թեմայի ուսումնասիրությունը շարունակվի նաև 2019-ին, ապա այն պետք է տեղ գտնի գալիք տարվա պետական բյուջեում, ինչը նշանակում է, որ Գորիսի պետական համալսարանը մինչև ս.թ. հունիսի 15-ը պետք է առաջարկված երկու հայտից մեկը երաշխավորությամբ, ներկայացներ գիտության պետական կոմիտեի:

Գորիսի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ հունիսի 14-ին հրավիրված նիստը, ի թիվս այլ հարցերի, պետք է քննարկեր նաև այդ հարցը ու պատասխան տար, թե երկու հայտից ո՞ր մեկն է ուղարկվում գիտության պետական կոմիտեի, ինչի համար էլ օրակարգում այսպիսի հարց էր դրվել՝ «2019թ. պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու նպատակով ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ներկայացվելիք գիտական եւ գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի ու զարգացման ծրագրի ներկայացրած հայտերը քննարկելու եւ ընդունելու մասին» (գեկուցող՝ Ռազմիկ Վարդանյան):

Հունիսի 14-ին գիտխորհրդում հարցի քննարկումը ձախողվել էր. դրան անդրադարձել է մայրաքաղաքային լրատվամիջոցներից մեկը, ուստի եւ այդ օրվա զարգացումներին նորից չենք անդրադառնա, մանավանդ որ նշված հրապարակումը ներկայացվել է նաև syuniacyerki.am կայքում:

Հունիսի 15-ին շարունակվել է գիտխորհրդի՝ նախօրեին ընդհատված նիստը:

Գիտխորհրդի 28 անդամից մասնակցում էին քսանը: Նիստը վարում էր համալսարանի ռեկտոր Արտյունյա Ղուկասյանը, ով համառոտ ներկայացրեց հարցի նախապատմությունը, նախօրեին ընդհատված նիստի վերաբերյալ թերթային հրապարակումը, որում արծարծված հարցերից ոչ բոլորի հետ էին համակարծիք գիտխորհրդի անդամները: Եւ, այնուհանդերձ, ռեկտորը համերաշխության, գործնական աշխատանքի, անձնական խնդիրներից ու հետաքրքրություններից վեր կանգնելու, ներկայացված հայտերի գիտական մակարդակն ուշադրության կենտրոնում պահելու հորդոր հղեց ներկայից:

Հանելի էր նկատել, որ գիտխորհրդի նիստի օրակարգում խոսքը միայն «Սյունիքի հոգեւոր եւ նյութական ժառանգությունը» թեմայի մասին չէր:

Գորիսի պետական համալսարանը գիտության պետական կոմիտեի 2019թ. ծրագրում ներգրավվելու այլ մտադրություններ եւ ունի: Հունիսի 15-ի նիստում, օրինակ, հավանության արժանացավ երեք թեմա. ա) ղեկավարներից ստացված թուրմերի հակաօքսիդիչ հատկությունների ուսումնասիրում. էջ 8

Ի՞նչ է կատարվել Արծվանիկի դպրոցում՝ տնօրենի ընտրության ժամանակ. «Լավագույն» ավանդույթների շարունակում, թե՛...



Մերի Գանդալյան
Մարզպետարանի կրթության վարչության պետ

Հունիսի 15-ին Արծվանիկի միջնակարգում տեղի է ունեցել տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

Մրցույթն անց է կացրել դպրոցի խորհուրդը՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ:

Խորհրդի նիստն իրավագործ էր. խորհրդի ութ անդամից բացակա էր մեկը:

Խորհրդի նախագահ Գրիշա Գաբրիելյանի հավաստմամբ՝ երեք հավակնորդից մրցույթին չի ներկայացել մեկը՝ Ռոմա Զաքարյանը, ով Սյունիքի մարզպետարանի աշխատակից է: Եւ մրցույթը տեղի է ունեցել երկու հոգու՝ Ռոբերտ Հարությունյանի եւ Լուսինե Հարությունյանի միջև:

Մրցույթը, ըստ խորհրդի նախագահի, ընթացել է ՀՀ կառավարության՝ խնդիրը կարգավորող որոշումներին համապատասխան. հավակնորդները ներկայացրել են հաստատության զարգացման իրենց ծրագիրը, անց է կացվել հարցազրույց՝ նրանց գործնական հմտությունները ստուգելու նպատակով:

Այնուհետև տեղի է ունեցել փակ քվեարկություն. հինգ հոգի քվեարկել է հոգուտ Լուսինե Հարությունյանի, երկու հոգի՝ հոգուտ Ռոբերտ Հարությունյանի:

Թվում էր, թե ամեն ինչ ընթացել է օրինականության հունով եւ Լուսինե Հարությունյանն ընտրվել է դպրոցի տնօրեն, սակայն...

ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ներկայացուցչի Մարինե Ղազարյանը նկատել է, որ խորհրդի անդամ Աննա Սահակյանը քվեաթերթիկի վրա մշում կատարելուց հետո այն լուսանկարել է հեռախոսով եւ ուղ-

արկել ինչ-որ մեկին՝ դրանով իսկ խախտելով փակ քվեարկության սկզբունքը, որ սահմանված է գործող կանոնակարգով:

-Խախտվել է քվեարկության կարգը՝ տնօրենին փակ քվեարկությամբ ընտրելու վերաբերյալ, -ասաց Մարինե Ղազարյանը: -Եվ իբրեւ ԿԳ նախարարության ներկայացուցչի բացասական եզրակացություն են գրել, որն էլ սահմանված ժամկետում կներկայացնեն նախարարություն:

Ակնկալվում է, որ ԿԳ նախարարի կողմից, ինչպես պահանջում է գործող կարգը, կծեւավորվի համաձայնագրով, որն էլ իր եզրակացությամբ կգնահատի տեղի ունեցածը, ինչն էլ, հնարավոր է, հիմք կհանդիսանա ընտրության արդյունքները չեղարկելու համար:

Խորհրդի անդամի կողմից քվեաթերթիկը լուսանկարելու եւ ինչ-որ մեկին դրանով հաշվետվություն տալու իրողությունը, որ արձանագրվել է խորհրդի նիստի անցկացման վայր-լսարանում՝ բոլորի աչքի առաջ, չի նկատվել խորհրդի նախագահ Գրիշա Գաբրիելյանը: Նա հերքում է նաև դպրոցում շրջանառվող կարծիքը, թե խորհրդի անդամների վրա մարզպետարանի համապատասխան վարչությունից ճնշումներ են գործադրվել:

Սահմանված ժամկետում խորհրդի նախագահը մրցույթի արդյունքները կներկայացնի Սյունիքի մարզպետարան, կներկայացվի նաև ԿԳ նախարարության ներկայացուցչի բացասական եզրակացությունը:

Կարելի է ենթադրել, որ արձանագրված փաստի առկայության պարագայում Սյունիքի մարզպետարանը եւ կրթության ու գիտության նախարարությունը կգնան ընտրության արդյունքները չեղարկելու ճանապարհով, եւ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար կհայտարարվի նոր մրցույթ:

Արծվանիկի դպրոցում տեղի ունեցածը նոր մտորումների տեղիք է տալիս:

Խորհրդի անդամն ու մ էր ուզում ապացուցել, որ ինքը քվեարկել է հոգուտ Լուսինե Հարությունյանի:

Այնուհետև՝ ժամանակներն իբր փոխվում են, իսկ մենք այդպես էլ չենք կարողանում կարգավորել հանրակրթական դպրոցների տնօրենների ընտրության պարզագույն գործը:

Հետադարձ հայացք ձգենք վերջին մեկերկու տարում հանրակրթական դպրոցների տնօրենների շուրջ տեղի ունեցած իրադարձություններին:

Կապանի N1 դպրոց, Կապանի N3 դպրոց, Դարբասի դպրոց, Քարաշենի դպրոց, Տեղի N1 դպրոց, Սյունիքի դպրոց, Արծվանիկի դպրոց... Նշված դպրոցներից յուրաքանչյուրում տեղի են ունեցել օրինականության հետ որեւէ աղերս չունեցող



Հուշակոթող՝ հիշատակի եւ հավերժացման

էջ 1 «Այս հուշակոթողի բացումը վերստին հիշեցնում է մեզ այն փառավոր ուղին, որ 1990-ականներին Հայաստանի սահմանների պաշտպանության ժամանակ անցել է Կարմրաբարի գումարտակը՝ հրամանատար Արթուր Մարտիրոսյանի՝ բոլորիս քաջ հայտնի «Վարիանտի» գլխավորությամբ:



սխարհանքներն են»:

Տարիների հեռվից, թերեւս, հեշտ է խոսել գումարտակի անցած հերոսական ուղու մասին, սակայն չմոռանանք, որ այդ ուղին արժեցել է գումարտակի տասնյակ երիտասարդ եւ քաջարի հայորդիների կյանք, եկեք մեր խոնարհումը բերենք նրանց եւ բոլոր այն նահատակված հերոսներին, ովքեր իրենց կյանքի գնով հաստատեցին մեր լինելիության իրավունքը, մեր երախտագիտությունը հայտնենք եւ գումարտակի, եւ ռազմի դաշտում 1990-ականների հաղթանակը կռած մարտիկներին եւ կամավորականներին, քանի որ հենց նրանց թողած ոգու ժառանգության շնորհիվ այսօր եւս մեր սահմանների պաշտպանությունը հուսալի ձեռքերում է, վկան՝ Ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ մեր զինվորների

Գեներալ-մայոր Վալերի Քոչարյանն իր խոսքում մասնավորապես նշեց, որ յոթերորդ մոտոհրաձգային գումարտակի օրինակով զինվորների մի քանի սերունդ է դաստիարակվել, թե ինչպիսին պիտի լինի հայ զինվորը. «Բնականաբար,

այս հրաշալի հուշակոթողն այն նվազագույնն է, որով կարող ենք արժանին մատուցել մեր այն տղաներին, ում կյանքի գնով ձեռք բերվեց հայի հպարտությունը, հաղթելու պատրաստակամությունը, այն բարձր ոգին ու տրամադրությունը, որ ունի մերօրյա

զինվորը»: Այս միտքն իր ելույթում այլ կերպ ձեւակերպեց ժամկետային զինձառայող, կրտսեր սերժանտ Դավիթ Նառատյանը. «Եթե յուրաքանչյուրս գիտակցենք, որ իսկական զինվոր ենք եւ պարտավոր ենք կատարել մեզ առաջադրված խնդիրները, ապա թշնամու

մտքով չի էլ անցնի այք զցել մեր հողի վրա»: Հուշակոթողի ստեղծման պատմությունը ներկայացրեց նախաձեռնող խմբի անդամ Ջիվան Խուրշուդյանը, ով պատմեց նաեւ գումարտակի նախկին ճակատային ընկերների մտերմության մասին:

Հիշարժան իրադարձությանը մասնակցելու էին եկել յոթերորդ հրաձգային գումարտակի կազմում կրկնած մարտիկներ: Արմեն Հովհաննիսյանն Արմավիրից է: 1993-ին զորակոչվել է բանակ, ծառայության անցել Կարմրաբարի գումարտակում: Սկզբնական շրջանում գումարտակի ավագ խոհարարն էր, հետո երբ գումարտակը մտել է Կուբաթի, մասնակցել է մարտական գործողությունների: Այդ օրը մարտական ընկերները շատ բան ունեին պատմելու միմյանց, հիշելու նաեւ զոհված իրենց զինակիցներին:

Ի դեպ, հուշակոթողի կողքին աղբյուր է կառուցվել, որի պատվանդանին մաղթանք է. «Հայրենիքի պաշտպանների կյանքն այս օրի նման երկար թող լինի»:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Շնորհակալություններ, պաշտոնաթողություններ, ստուգումներ...

Տնօրեն ենք ազատում, երբ որ ուզում ենք:

Տնօրեն ենք հնարում, երբ եւ ուն ուզում ենք: Տնօրենի ընտրության փոխարեն մրցույթներ կայացրանք ենք խաղում, երբ որ մեզ պետք է: Տնօրենի հավաստագիր ենք ձեռք բերում՝ շրջանցելով ամենակարեւոր չափանիշներն անգամ:

«Լավագույն» տնօրենի կերպար ենք հունցում՝ մի կողմ դնելով տեսչական ստուգման ամոթալի արդյունքները, չասելով նույնիսկ, թե ինչ ասել է «լավագույն» տնօրեն:

Առօրյա ստուգումներ ենք հրահրում այն տնօրենների ղեկավարած կառույցներում, ովքեր պատշաճ չեն համարում կրթության վարչությունում ամեն օր սուրճ խմելը:

Տասնմեկ տնօրենի կարգապահական տույժի ենք ենթարկում՝ չասելով, թե ինչի համար:

Կրթության վարչության պետ ենք ազատում եւ նորը հորինում՝ չասելով, թե ինչու ենք ազատում եւ ինչ չափանիշներով ենք նորը նշանակում:

Մարզպետի ընդդիմախոսների դեմ ոստիկանությանը դիմումներ գրելու, մատնություններ անելու կարիք է առաջանում՝ նորից դիմում ենք մարզպետարանի կրթության վարչությանն ու դպրոցի տնօրեններին:

Խմբերով 334 շարքերը մտնելու եւ այնտեղից խմբերով հեռանալու խնդիր է առաջանում՝ նորից դիմում ենք հանրակրթական դպրոցի տնօրեններին:

Եւ այդպես էլ «կառավարում» ենք մարզի հանրակրթության ոլորտը...

Ու պարզագույն հարցեր են ծագում՝ ո՞վ է այդ ամենի համար պատասխանատու, կա՞մարզպետարանում գոնե մեկը, ով կարող է պատասխանել բարձրագույն հարցերին:

Ունենք կրթության վարչություն մարզպետարանում, թե՛ ոչ: Մինչեւ ե՞րբ ենք ոլորտի «պատասխանատուի» արտասվելու, հազարու, հուզվելու, պարելու անմրցելի հմտությունը համարելու մեղմացուցիչ հանգամանք՝ հանրակրթության ոլորտում թեւեթող այդ արտառոցություններին հետեւելիս...

Մինչեւ ե՞րբ ենք գլուխներս մտցնելու ավագի մեջ եւ կեցվածք ընդունելու, թե իբր հանրակրթության ոլորտում ամեն ինչ ընթանում է բնականոն հունով...

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Դաշնամուրային երաժշտության երեկո եւ ոչ միայն

Կապանի արվեստի մանկական դպրոցի դահլիճում հունիսի 10-ին դաշնամուրային երաժշտության երեկո էր: Ելույթ ունեցան դաշնակահարներ, միջազգային մրցույթի դափնեկիրներ, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողուհի Սերի Պետրոսյանը եւ Պ. Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցի շաշկերտ Սերգեյ Հակոբյանը (դասատու՝ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Սերգեյ Քեչեկ): Հանդիսականը վայելեց կատարողական բարձր վարպետությամբ հնչեցրած երաժշտության հանույթը: Կատարվեցին Բեթհովենի, Շոպենի, Մոցարտի, Լիստի, Դեբյուսիի, Շուբերտի, Վերդիի, այլ ականավոր կոմպոզիտորների ստեղծագործություններ: Համերգի ավարտին «Սյունյաց երկիր» Սերգեյ Քեչեկը փոխանցեց, որ իր դաշնակահարները համոզեց եկան բավականին բարդ ծրագրով, ինչը վկայում է, որ նրանք արդեն կարող են լուրջ հայտ ներկայացնել դաշնամուրային արվեստում: Մասնավորա-

պես նշեց, որ Սերգեյ Հակոբյանը ընդգրկված է Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի հինգ լավագույն դաշնակահարների թվում:

Նա տեսա իմ սանուհու կատարողական աճը, որ գրանցվել է վերջին մեկ տարում, իսկ կոնսերվատորիայում չորս տարվա ուսումը նրան հնարավորություն կտա, որ ավելի մեծ



Բեմեր նվաճի, - ասաց արվեստի մանկական դպրոցի տնօրեն Մարիա Նահապետյանը, ով Սերի Պետրոսյանի դասախոսն էր Կապանի արվեստի պետական թրվեցում:

Հաջորդ օրը «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամի նախաձեռնությամբ եւ օժանդակությամբ տեղի ունեցավ

համերգ: Արվեստի մանկական դպրոցի բեմահարթակը տրամադրվել է Երեւանի Ա. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի սաներին, ովքեր Կապանի եւ Քաջարանի մանկական արվեստի դպրոցների եւ Կապանի N2 երաժշտական սաների հետ համոզեց եկան համատեղ համերգով: Մինչ միջոցառումը սկսվելը Կապան համայնքի ղեկավարի

արժանացել դպրոցի սան Նանե Պատվականյանը: Նրա ուսուցիչ Բորիս Մինասյանը եւ կրթօջախի տնօրեն Մարիա Նահապետյանը պարգևատրվել են փառատոնի պատվոգրով: Նույն «Էտյուդ» 2018 մրցույթը փառատոնում դպրոցի թատերարվեստի բաժնի սաները (դասատու՝ Արթուր Գաբրիելյան) առաջին մրցանակ են ստացել «Շունն ու կատուն» եւ «Քաջ Նագար» բեմադրությունների համար: «Ամուսն» անվանակարգում Մոնա Փարսադանյանն արժանացել է առաջին կարգի մրցանակի: Իսկ «Հրաշամանուկ» մրցույթը - փառատոնում «Պարային լավագույն դուետ- 2018» պատվոգրի եւ գավաթի են արժանացել Անահիտ Ալեքսանյանը եւ Նանե Անտոնյանը (դասատու՝ Թամարա Ստեփանյան):

Մրցանակաբաշխությունից հետո մայրաքաղաքից եկած պատանի երաժիշտները եւ Կապանի ու Քաջարանի դպրոցների սաները համոզեց եկան համերգային հարուստ ծրագրով, ինչը վկայում է, որ շնորհալի երաժիշտների մի սերունդ է աճում:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ՄԵԿ ԱՐՃԱԹ, ԵՐԿՈՒ ԲՐՈՆԶ



Ռուսաստանի Դաշնության Անապա քաղաքում անցկացվեց քիթ-բոքսի աշխարհի գավաթի խաղարկությունը: Հայաստանի հավաքականի կազմում Սյունիքի մարզի քիթ բոքսի «Գարեգին Նժդեհ» ակումբը (մարզիչ, ՀՀ վաստակավոր մար-

զիչ Արայիկ Սարգսյան) պատասխանատու այդ մրցմանը մասնակցեց իրենց մարզիկով, ընդ որում՝ Նոյ Անտոնյանը արժանացավ արծաթե, Վաչե Գյուլբուրդյանը եւ Էրիկ Մարտիրոսյանը բրոնզե մեդալի: Ակումբի մարզիչ կարծիքով՝ իր սաները ֆիզիկապես եւ տակտիկապես լավ էին պատրաստվել մրցմանը, իրենք էլ ոսկի մեդալ նվաճելու հաստատակամությամբ էին մեկնել մրցավայր, բայց միշտ ինչ-որ բան խանգարում է մեր մարզիկներին բարձրանալ պատվով պատվանդանի ամենավերին հարթակ եւ հնչեցնել տալ մեր հանրապետության օրհներգը: Երկրորդ մրցանակակիր Նոյ Անտոնյանը եզրափակչում զիջել է դադատանցի մրցակցին: Ասում է, որ թույլ տված սխալները կշտկի հաջորդ պատասխանատու մրցումից առաջ: Արայիկ Սարգսյանն էլ հավելում է, որ վերջնական հաղթանակին հասնելու համար խոչընդոտում են մրցափայտի կողմնակալությունը, եւ իր սաների հոգեբանական ցածր պատրաստվածությունը: Բացի այդ հովանավոր չլինելու

պատճառով բաց թողեցին Եվրոպայի առաջնությունը, ինչը հոգեբանորեն ազդեց եւ մարզիչի, եւ՝ նրա սաների վրա: Մինչ այդ պատրաստվում են մասնակցելու մարզաձեւի աշխարհի առաջնությանը, որ կայանալու է սեպտեմբերին: Լիախույս է մարզիչը, որ կարելու այդ մրցման օժանդակողներ կգտնվեն, իրենք էլ կզգտեն բարձր պահել հանրապետության եւ Սյունիքի մարզի պատիվը:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի անբացատրելի նահանջը



Էջ 1 Ասվածը հավաստող միայն մեկ փաստ. ազգային զարթոնքի օրերին (2018թ. ապրիլ) հենց կոմբինատից էին վարձկաններ ուղարկվել Կապան ցուցարարներին ահաբեկելու եւ ծեծելու համար (տեսանյութը տարածված է համացանցում), եւ, որքան էլ զարմանալի է, մինչեւ հիմա Վահե Գալստյանը, Սիեր Պոլսկովը, Նարեկ Ամբարյանը, Զարուհի Տոնապետյանն ու իր թիկնապահը չեն հարցաքննվել եւ պատասխանատվության կանչվել:

Առաջին 24 հարցը, որոնց պատասխանը պակասում է Սիեր Պոլսկովի նորարարական ֆեյսբուքյան էջում

Հունիսի 12-ից ֆեյսբուքյան տիրույթում սյունեցիների հետաքրքրող մի էջ է ավելացել՝ «Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» անվամբ: Էջի ծնունդն ազդարարել է Քաջարանի կոմբինատի տնօրեն Սիեր Պոլսկովը՝ մոտ մեկ րոպե տեւող ուղերձով: Ըստ տնօրենի՝ դա շփման հարթակ է կոմբինատի ու հանրության միջեւ:

Մենք անկեղծորեն ողջունում ենք այդ նախաձեռնությունը եւ խոստանում պարբերաբար շփվել տնօրենի հետ՝ Սյունիքին հետաքրքրող հարցերի շուրջ:

Բայց որպեսզի հանրություն-կոմբինատ անկեղծ շփումը կայանա, որպեսզի այդ հարթակի ստեղծումն ինքնանպատակ չլինի ու հերթական թատրոնի տպավորությունը չթողնի, պետք է հնարավորինս արագ՝ մույն էջի միջոցով, լույս սփռել հանրությանը հետաքրքրող բազմաթիվ հարցերից մի քանիսի վրա (մյուս հարցերը՝ դրանց պատասխանը ստանալուց հետո), այլապես անկեղծ շփման մասին խոսք լինել չի կարող:

Ահա եւ հարցերը, որոնց պատասխանն ակնկալում ենք Սիեր Պոլսկով ֆեյսբուքյան հերոսից:

Հարց 1. ո՞վ է Սիեր Պոլսկովը, ինչպե՞ս կարելի է ծանոթանալ նրա կենսագրությանը, ի՞նչ բացատրություն ունի հանգամանքը, որ կոմբինատի տնօրենի ամսական աշխատավարձը 20 մլն դրամ է, իսկ շատ-շատ հանքագործներինը՝ դրա մեկ տոկոսը:

Հարց 2. ո՞վ է Նարեկ Ամբարյանը, ո՞վ է Զարուհի Տոնապետյանը, ինչո՞վ են նրանք զբաղվում կոմբինատում, ինչպե՞ս կարելի է ծանոթանալ նրանց կենսագրությանը, ի՞նչ սկզբունքով է որոշվել նրանց աշխատավարձը:

Հարց 3. քանի՞ մարդ է 2014-ի հուլիսից ի վեր աշխատանքի ընդունվել կոմբինատում եւ նրանցից քանի՞սն են դրսեյ, ինչո՞վ է բացատրվում միեւնույն աշխատանքը կատարող տեղացի եւ ոչ տեղացի մասնագետների աշխատավարձի եական տարբերությունը:

Հարց 4. ապրիլ-մայիսյան ցույցերի ժամանակ հանքագործներին խոստացաք աշխատավարձերի բարձրացում, ի՞նչ էք արել այդ ուղղությամբ:

Հարց 5. 2014-ի հուլիսից ի վեր քանի՞ տնտեսվարող սուբյեկտ է վերացել Սյունիքում այն պատճառով, որ Քաջարանի կոմբինատը կրճատել կամ վերացրել է նրանց տրվող պատվերները՝ դրանք տեղափոխելով Երեւան կամ այլ վայրեր, ու քանի՞ մարդ է գործազուրկ դարձել այդ ամենի հետեւանքով:

Հարց 6. ի՞նչ կասեք համացանցում տարածված այն տեսանյութի կապակցությամբ, որը վկայում է Քաջարանից ուղարկված վարձկանների միջոցով ցուցարարներին սպառնալու մասին, արդյո՞ք դուք տեղյակ չեք եղել, որ Զարուհու թիկնապահը Քաջարանում մարդիկ է հավաքագրում ընդդեմ խաղաղ ցուցարարների:

Հարց 7. ո՞ր է կորել Զարուհի Տոնապետյանը:

Հարց 8. ի՞նչ աշխատանքներ եք կատարում Ողջի գետի հունում:

Հարց 9. ի՞նչ քայլեր եք ձեռնարկել Քաջարան գյուղը տեղահանելու եւ այնտեղ նոր հանք շահագործելու ուղղությամբ, ինչպե՞ս եք վարվելու գյուղի գերեզմանի եւ եկեղեցու հետ, եթե այնտեղ հանք բացեք:

Հարց 10. ինչո՞ւ չի հրապարակվել գլխավորապես Քաջարանի կոմբինատի կողմից ֆինանսավորվող «Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամի 2017թ. հաշվետվությունը, որն օրենքի պահանջ է:

Հարց 11. ինչո՞վ եք հիմնավորում փաստը, որ 2014-ից ի վեր, ամեն տարի, պակասել է կոմբինատի կողմից պետությանը տրվող հարկերի չափը, այն էլ՝ հանքանյութի արդյունահանման ծավալների գրեթե եռակի մեծացման պայմաններում:

Հարց 12. ինչո՞ւ հանրությանը չեք ասում, թե որ լրատվամիջոցներով եք հրապարակել կոմբինատի 2014, 2015, 2016 եւ 2017 թվականների ֆինանսական հաշվետվությունը, ինչպե՞ս կարելի է ծանոթանալ այդ հաշվետվություններին:

Հարց 13. սոցիալական պատասխանատվության ի՞նչ բեռ ունի Քաջարանի կոմբինատը՝ ըստ սեփականաշնորհման պայմանագրի կամ կառավարություն-սեփականատերեր պայմանավորվածության համաձայն: Կարո՞ղ ենք ծանոթանալ հիմնարար այդ փաստաթղթին:

Հարց 14. ի՞նչ մեքենասարքավորումներ եք Քաջարանից տեղափոխել Աֆրիկա եւ ինչո՞վ եք այնտեղ զբաղված, ամսական քանի՞ մարդ եք ուղարկում այնտեղ, լուծվե՞ց արդյոք նրանց աշխատավարձի հետ կապված խնդիրը:

Հարց 15. ո՞ր ընկերությունների կամ ո՞ւմ սեփականությունը հանդիսացող բեռնատարներն են փոխադրում Քաջարանի կոմբինատի խտանյութը, ինչո՞ւ էք խտրություն դնում տեղացի եւ դրսեյ վարորդների միջեւ:

Հարց 16. կարո՞ղ ենք փաստել եւ արձանագրել, որ այլեւս դուք Վահե Գալստյանի գործիքը չեք, որ այլեւս նա առնչություն չունի Քաջարանի կոմբինատի ղեկավարման հետ:

Հարց 17. Քաջարանի կոմբինատի միջոցներով ի՞նչ ձեռնարկություն եք հիմնել ազատագրված տարածքներում եւ ովքե՞ր են դրա սեփականատերերը:

Հարց 18. մոտ մեկուկես տարի Վահեն Երեւանից Կապան էր տեղափոխվում՝ օգտվելով ձեր կողմից վարձակալված եւ ձեր աշխատակիցներին մայրաքաղաքից փոխադրող ուղղաթիռից, ինչը հավաստել եք նաեւ դուք:

Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ուղղաթիռը հիմա Երեւանից Կապան չի փոխադրում ձեր աշխատակիցներին, ինչո՞վ եք այդ մարդիկ մայրաքաղաքից Սյունիք հասնում:

Հարց 19. ի՞նչ կապ ունի Քաջարանի կոմբինատը «Քրոնիմետ մետալ քրեյթիգ Սի Այ Էս» ՓԲ ընկերության հետ, մայրաքաղաքի ո՞ր հասցեում է գործում այդ ընկերությունը:

Հարց 20. արդյո՞ք Քաջարանի կոմբինատը կապ ունի վերջին շրջանում Կապանում եւ Քաջարանում ստեղծվող ֆեյսբուքյան կեղծ էջերի ու դրանցում տեղ գտնող վճարովի «թունեթերի» հետ:

Հարց 21. ովքե՞ր են «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության սեփականատերերը ներկայումս, ովքե՞ր էին 2004-ին:

Հարց 22. մտադի՞ր եք արդյոք Լորձվանիկ գյուղի բնակիչներին փոխհատուցել նրանց կյանքին եւ առողջությանը հասցվող վնասի գոնե մի մասը:

Հարց 23. դուք չե՞ք պատրաստվում ներդրություն խնդրել սյունեցիներից՝ Վահե Գալստյանի չարագործություններին եւ հակասյունիքյան արարքներին աջակցելու համար:

Հարց 24. դուք չե՞ք պատրաստվում հրաժարական տալ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնից:

Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամի առեղծվածը

Հանրապետության կառավարության 2016թ. դեկտեմբերի 15-ի N 1299-Ն որոշմամբ ստեղծված Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամի ֆինանսական գործունեությունը շարունակում է մնալ վահեակոմբինատական օրերի սյունիքյան առեղծվածներից մեկը:

Ինչպես արդեն ասել ենք, 2016թ. դեկտեմբերի 27-ին Վահե Գալստյանը հայտարարել է, թե Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամին փոխանցված մոտ 300 մլն դրամն ուղղվել է «Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամին՝ պարտքով վերադարձնելու պայմանով:

Հակառակ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի՝ Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամի 2016թ. հաշվետվությունը չկա սահմանված պաշտոնական կայքում՝ azdarar.am-ում, ուստի եւ չենք կարող ասել, թե իրականում որքան գումար է 2016-ին մուտք եղել հիմնադրամ եւ ինչ նպատակով են կատարվել ծախսերը:

Իսկ 2017թ. հաշվետվությունը դրված է azdarar.am կայքում: Մուտք է եղել մոտ 444 մլն դրամ: Այնքան են նաեւ կազմակերպությունները, անհատները, որոնք հիմնադրամին գումար են փոխանցել:

Սակայն, հակառակ նշված օրենքի, հաշվետվության մեջ չի արտացոլվում, թե ինչ նպատակով է ծախսվել այդ գումարը: Ասվում է միայն, որ կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը կազմել են 365 մլն դրամ՝ չմանրամասնելով (հակառակ գործող օրենքի), թե կոնկրետ ինչ նպատակով են ծախսեր կատարվել:

Ոչ մի խոսք այն մասին, թե ինչ նպատակով է ունեցել 2016թ. դեկտեմբերին «Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամին պարտքով տրված 300 մլն դրամը:

Կարծում ենք, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն Սյունիքի մարզի բնակչությանը կասի, թե 2016 եւ 2017 թվականներին որքան մուտքեր եւ ծախսեր է (կոնկրետ ուղղություններով) ունեցել Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրումների հիմնադրամը, որը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է, որի ղեկավարը եղել է մնում է Վահե Գալստյանը:

«Սյունյաց երկիր»

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ - ՍԱՅՅԱՆԱԿԱՆ

Ջաղացածորից սկսեմ նորից, Անցնեմ զառիվար Բաղդամաձորով, Խոր Խաչիձորով հանգիստ բարձրանամ, Մութ Յոնջաձորում երազներիս հետ անրջեմ սիրով: Դասնեմ պռնկին Մաղաթու ձորի՝ մի լավ ցած նայեմ, Ալավերդու ձորի խորհուրդը խառնեմ Ղալի վեղի ձորին, Մեր Բաղի ձորին, Իրիցի ձորին, Քասպարի ձորին, Եվ Շռկետի երես ձորակով հանգիստ հեռանամ: Թեքվեմ աղբյուրի գուլալ ակունքին Դեղնաքերձ ձորի, Օլլանի Մատներ ձորակն անցնեմ Ու Տնկամարգի պտերով պատած խոնավ ձորակով Իջնեմ մթամած Հացուտաձորով: Արջամարգ ձորի խորխորատ մտնեմ, Մեծ ձորի մթնած հատակին հասնեմ, Մանու ձոր կազմող գույզ քարափներից կարոտս առնեմ, Հոգնած-լիացած Հարսնաձոր խուժեմ: Գնամ՝ բարձունքից Շահանդուխտ հարսի, Մեծ Որոտանի ձորի մեջ սուզվեմ՝ ծուլվեմ անհուճին:



ՍՈՒՐԵՆ ՎԱՐՈՒՆՅԱՆ Բ.Գորիս

ԱՎՏՈՍԱՏ ԿԱՄ ՆՎԵՐ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԻՆ

Այսօրվա որ հայի էլ առաջարկես թարգմանել ավտոմատ բառը, կասի ինքնաձիգն է՝ ռուս Կալաշնիկովի ստեղծածը: Եվ չի սխալվի. շուրջ 30 տարի է պատերազմի մեջ ենք, բա ի՞նչ էիք ուզում: Մատո՞ղ ձգանի են դնում, մի քանի վայրկյանում ամբողջ փամփշտակալը դատարկվում է: Սա հայտնի բան է: Բայց այնքան էլ հայտնի չէ այն, որ ավտոմատը վաղուց արդեն հաստատվել, կասե՛ի՝ բազմել է մեր ամբողջ իրականությունում: Եթե այդպես է, ապա ինչի՞ թուրքին դա հայտնի չէ: Պատասխանեմ՝ քանի որ քողարկված է, պատված է շղարշով: Հիմա՝ հերթով:

Նախ ասենք, որ ավտոմատ՝ ինքն իրեն (կրակելու ձեռով) մեզ մոտ այնքան

հարցեր են լուծվում, որ երբեք մտքով չի անցնի: Իհարկե զարմանալի է, բայց այդպես է: Դա համարյա բոլոր ոլորտներում է, ամենուր եւ դրսեւորվում է ամենատարատեսակ ձեւերով:

Օրինակ: Մեկ էլ տեսնում ես մթերալիս ասպրանքների գները բարձրացան՝ ավտոմատ կարգով ու գնացին: Երբ բանը բանից անցնում է, գոռով էլ չես կարող, անգամ աննկատ, այն իջեցնել: Այստեղ ավտոմատը դեպի իջեցում ընդհանրապես չի գործում կամ չի կրակում:

Սա առանձնահատուկ է այն, որ շուկայում գնաճը հաստատուն առաջ է գնում, աշխատավարձ ու թոշակ չի բարձրանում

էջ 5

...ԵՎ ՈՉԻՆ ԱՅՂ ԱՐՅԱՆ ՎՐԵԺ Է, ՑԱՍՈՒՄ ՈՒ ՊԱՏՉԱՍ

Էջ 1 Ուկրաինայի Կամենեց-Պոդոլսկի բարձրագույն զինվորական ինժեներական ուսումնարանը, այնուհետև լեյտենանտի կոչումով ծառայությունը շարունակում ցավակին իսկուհի տարբեր վայրերում: Երբ սկսվեց հայադրբեջանական հակամարտությունը, Համլետն այդ ժամանակ Պետրոպոլիս-Կամենեցի արդեն վերադարձել էր:

- Համլետը սակրավոր էր, բայց ոչ սովորական սակրավոր: Նա իր քաջով մեկ ոսկի էր, Համլետն անգին էր, նրա չափը հնարա-

բրեանից, գորականներ, Համլետի մարտական ընկերներից, դպրոցի մանկավարժական ու աշակերտական կոլեկտիվները:

-Համլետն օջախիս միակ որդին էր: Երբ Ռուսաստանից եկավ, ասացի՝ Համլետ, հիմա կան մարդիկ, որ թողնում-զնում են Հայաստանից, իսկ դու եկել ես այստեղ, ինչու, հետ դարձիր: Նա ասաց՝ հայրիկ, վախկոտներն են գնում, բացի դրանից, իմ մասնագիտության կարիքը Հայաստանում չափ է զգացվում: Ես պետք եմ իմ հայրենիքին... Եվ մնաց: Թողան գնալուց առաջ

թյունը Համլետի հանդեպ:

Գյուղի դպրոցի վաստակաշատ ուսուցչուհի Արշալույս Մանուցյանը կարծում է, որ հերոս են նաև Համլետի ծնողները: Իր ելույթում նա ասաց.

- Կան մեզնից հավերժ բաժանվածներ, ովքեր ներկա են մեր սրտերի մեջ, որոնց հիշում ենք մեծ երախտագիտությամբ, հարգանքով ու սիրով, խոնարհումով:

Այդպիսի անմահներից է Լալազար Մինասյանի որդին՝ Համլետ Մինասյանը՝ Արցախյան ազատամարտի հերոսը, ում անունը, արդեն քանի՜ տարի, կրում է Հարթիսի միջնակարգ դպրոցը:

Հարգարժան Լալազար Մինասյան, ես հարգանք ու ակնածանք եմ տածում Ձեր հանդեպ:

Ինձ համար Դուք ոչ միայն հերոսի հայր եք, այլ նաև հերոս հայր: Դուք Ձեր հերոսությամբ՝ Ձեր ապրելու անկողում կամքով, երբե՛ք, երբեք բացակա չեք դրել Ձեր որդուն: Արդեն 25 տարի է՝ 93-ից ցայսօր, նա ներկա է ե՛լ՝ Ձեզ, ե՛լ՝ մեզ համար: Ներկա է նաև այսօր՝ 2018թ. հունիսի 8-ին՝ իր ծննդյան տարեդարձին:



վոր չէր գնահատել, այնպիսի սանդղակ ու թիվ չկային, որ տային նրա գնահատականը: Համլետին այսպես է ներկայացնում ռազմական պատմաբան Ռաֆայել Թադևոսյանը:

Ու պատմում է Համլետ Մինասյանի կյանքի վերջին օրվա մասին:

- Թողան գյուղի համար թե՛ մարտեր էին ընթանում: Մեր մի բուռ տղերքը կովի մեջ էին մտել 350-400 հոգանոց թուրք օժոնականների դեմ: Իսկ Թողանը ռազմավարական նշանակություն ուներ երկու կողմի համար: Այստեղ էր նաև Համլետը: Նա ավտոմատը վերցրեց և առաջ ընկավ, թեև սակրավոր էր ու հետախույզ: Նրան բացատրեցին-աղաչեցին, որ չգնա առաջին գիծ: Ախր նա անփոխարինելի էր իր մասնագիտության մեջ, նրա նման 2-րդը դարձյալ ինքն էր: Բայց անդրդվելի էր: Գնաց... Ու մենք կորցրինք բարձրակարգ սակրավորին:

Եկավ մեզ տեսնելու: Երկար նայեց բոլորիս ու գնաց: Էլ չվերադարձավ...

Լալազար Մինասյանը, ով արդեն 80-ն անց մարդ է, չկուցուցեց ցավի տակ, ընդհակառակը, ծեռնոց նետեց անողորմ ճակատագրին. Ես ինչ էլ ասեմ, դու չես հասկանալ: Նրանք պիտի մեծանան, Ես Համլետի հիշատակի առջև պարտք ունի ինքը: Ու, բացի դրանից, Համլետը չի ների իրեն:

Երեւանի թիվ 62 դպրոցում, ուր սովորել է Համլետը, իրենց հերոս շրջանավարտին հիշում են: Համլետ է հայրը գնում դպրոց՝ ասես աշակերտների մեջ իր որդուն փնտրելու, Համլետի կարոտը նաև աշակերտներից առնելու: Իսկ դպրոցում սպասված ու ցանկալի հյուր է նա...

Իմ հիշողությունն այս պահին տանում- հասցնում է 1993-ի գարնանային մի պայծառ առավոտ: Այնքան լավ եմ հիշում. դպրոցի անվանակոչության օրն էր: Տիրում էր եռուզեռ: Դպրոցի բակում հավաքվել էր հոծ բազմություն: Ներկա էին ոչ միայն ուսուցիչները, աշակերտությունը, այլ նաև Հարթիսի բնակչությունը, Երեւանում բնակվող մեր համագյուղացիներից շատերը, զինվորական համազգեստով բարձրաստիճան պաշտոնյաներ ու բազում հյուրեր: Բոլորիս ուշադրության կենտրոնում Համլետի ծնողներն էին. չէ՞ որ զենք բռնեց ու Արցախ գնաց նրանց քաջակորով որդին: Զենք բռնեց ու հիացավ Արցախով, նրա արդար ու անվեհեր մարդկանցով: Չուլվեց նրանց ու նվիրեց ամենացորդ կանաչ մի կյանք՝ Համլետ անունով:

Նրա շուրթերը բարբառում էին հայրենաշունչ խոսքեր.

Իմ հայ՝ ժողովուրդ, քո հողին մեռնեմ, Արցախ հայություն, քո ջրին մատաղ, Հայաստան, Արցախ միացած տեսնեմ, Աշխարհում էլ դարդ համարյա չունեմ:

Ավա՛ղ, անկատար մնացին երիտասարդ Համլետի իղձերը: Ինչպես բոլոր մարտերում, Թողանի մարտում եւս նա առաջնորդ-

Ուստի՝ սրտանց շնորհավորում եմ Ձեր որդու՝ Համլետ Մինասյանի ծննդյան 60-ամյակը:

Միջոցառմանը ելույթներով հանդես եկան Տաթևի համայնքի ղեկավար Մուրադ Միմոնյանը, Լալազար Մինասյանի կինը՝ տիկին Մարլենան, մարտական ընկեր, գնդապետ Արայիկ Մուրադյանը: Միջոցառման ժամանակ գյուղի դպրոցն արժանացավ պատվոգրի՝ Հայաստանի ԴՕՍԱԱԲ համահայկական հայրենասիրական հասարակական կազմակերպության կողմից՝ ՀՀ պաշտպանությանը անրապնդման, երիտասարդության մարզական եւ ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ներդրած ավանդի համար: Պատվոգիրը ստորագրել է կազմակերպության նախագահ Արկադի Թադևոսյանը՝ լեզենդար Կոմանդոր:

Համլետ Մինասյանի ծննդյան 60-ամյակի միջոցառմանը շուրջ հաղորդեց դպրոցի ուսուցչուհի Գայանե Շախաբաջյանի կազմակերպած գրական-երաժշտական ցերեկույթը, աշակերտները երգով-պարով-արտասանությամբ ներկայացրին Համլետի կյանքը:

Ի դեպ, Գորիսի Գ.Աշոտի անունը կրող մշակույթի տան ֆոնդերի պահպանման եւ կոմպլեկտավորման բաժինը Հ. Մինասյանի ծննդյան 60-ամյակի առթիվ ընթերցողներին ներկայացրել է նրա մասին պատմող գիրքը:

Համլետ Մինասյանը ոչ միայն բարձրակարգ զինվորական էր, նաև ստեղծագործում էր, գրում էր բանաստեղծություններ, դրանցից



Նրա նման սակրավորներ քիչ են ծնվում, նրա նման սակրավոր հերոսներ հազվադեպ են ծնվում...

Շահունյանի շրջանի Թողան գյուղը կարելի էր հեռակետ էր: Իսկ մինչ այդ... 1991թ. դեկտեմբերի 4-ին Համլետ Մինասյանն Իջևեամից հետ է կանչվում եւ ղեկավարների 6-ին գործուղվում «Հատուկ շրջան»՝ գտնվելով Լեռնային Ղարաբաղի Շահունյանի միասնական ջոկատների հրամանատարության տրամադրության տակ: Դեկտեմբերի 10-ին ազատամարտիկները Շահեն Մեղրյանի գլխավորությամբ, սկսում են հարձակողական մարտերն էրբեք եւ Թողան գյուղերի ազատագրության համար, որից հետո հնարավոր դարձավ շարունակել մարտերը Մանաշի-Քուզլուխ եւ Կանո-Ազատ գյուղերի ուղղություններով:

Սակրավորի այդ տեսակն այն օրերին հայկական ուժերին օդի, ջրի նման անհրաժեշտ էր: Նրանցից որեւէ մեկի կորուստը մարտի ելքի վրա էական ազդեցություն էր թողնում: Սիս ինչու անչափ թանկ էր Համլետը բոլորի համար:

- Ես գյուղերից եմ, մեզ մոտ մարդուն պատվելու, շնորհակալություն հայտնելու ամենասուրբ ձևը խոնարհվելն է: Ես խոնարհվում եմ Համլետ Մինասյանի ծնողների առջև: Կեցցե Համլետը, ով զոհվեց Արցախի ազատագրության համար, - ասում է Ռաֆայել Թադևոսյանը:

Համլետի հայրը՝ Լալազար Մինասյանը, ով ապրում է Երեւանում, հունիսի 8-ին Հարթիս էր եկել մասնակցելու որդու անունը կրող դպրոցում որդու ծննդյան 60-ամյակին նվիրված միջոցառմանը: Այդտեղ էին նաև հյուրեր

Համլետ Մինասյանի կիսանդրին դրված է «Մայր Հայաստան» զինվորական բանագրանում:

«Այունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանն էլ շատ բան ունի պատմելու Համլետի մասին:

-Սպարապետ Վազգեն Սարգսյանն արտասովոր էր Համլետի կորստյան համար: 1993-ին հանդիպելով Համլետի հորը, նա շատ հուզվեց: Սովորական հուզմունք չէր, դա գնահատական էր Համլետի խիզախությանը եւ արիությանը: Վազգեն Սարգսյանն ընդառաջ գնաց գյուղի եւ դպրոցի ցանկությանն ու տվեց իր համաձայնությունը՝ դպրոցը կոչելու Համլետի անունով:

Պատմությունը սովորաբար ժամանակի ընթացքում վերանայվում է, սրբագրվում: Բայց կան իրադարձություններ, որ չեն սրբագրվում: Եվ ինչպես Ավարայրի հերոսամարտը, այնպես էլ Արցախյան գոյապայքարը երբեք չեն մոռացվի: Եվ մեր տղաների սխրագործությունները երբեք մոռացության փոշիով չեն ծածկվի: Այդ տղաներն անմահ են: Եվ նրանք կապրեն այնքան, որքան կապրեն նրանց մասին հիշողությունները: Դրա համար էլ Հարթիսի միջնակարգ դպրոցը կոչվեց Համլետ Մինասյանի անունով: Համլետը Վազգեն Սարգսյանի հրամանով գնաց Շահունյան, Շահեն Մեղրյանն էր խնդրել: Գնաց Համլետը եւ համալրեց անմահների շարքը...

- Համլետ Մինասյանի կենսագրությունը վարքականն է մեր դպրոցի աշակերտների, հատկապես տղաների համար: Նրանք օրինակելիորեն են ծառայում հայոց բանակում, -ասում է դպրոցի տնօրեն Նորայր Եսայանը, նրանք լավ են ծառայում՝ այդպիսի արտահայտելով իրենց հարգանքը Համլետ Մինասյանի հանդեպ, իրենց պատասխանատվու-

վեց մահ իմացյալ հավատամքով ու անմահանալով՝ դարձավ հավերժի ճամփորդ:

Նա չհասավ մինչեւ Շուշի, Հոգին հասավ մինչեւ Շուշի, Կամուրջ դարձավ Գորիս-Շուշի, Որ գավակները մեր սյունեցի ճամփա բռնեմ մինչեւ Շուշի...

Բայց գիտե՛ք, Համլետն ունենալով ստեղծագործական ծիրը, չափածո խոսքով պատգամ է հղել բոլորիս.

Ու եթե ընկնեմ հանուն Արցախի, Շաղ չտաք շիրմիս ծաղիկներ ու լաց: Տղե՛ք, ջնջեցեք թշնամուն վայրագ, Որ հայոց հողում ես ընկնեմ վայրագ, Որ հայոց հողում ես մեռեմ խաղաղ:

Թե խաղաղ է նրա միջոց, դժվարանում եմ ասել, բայց մի բան պարզ է, ծաղկափթիթ հասակի տեր մարտիկը պահանջում է մեզնից չտխրել, չարցունքոտվել, այլ շարունակել ապրել ու ապրել, ապրել կենսախիճիդ կյանքով: Եվ, ո՛վ գարմանք, այս պատգամն առաջինն ասաց Համլետի վշտամորմը հայրը՝ Լալազար Մինասյանը: Նա որոշեց ապրել վշտերից ծանրագույնը քողարկելով իր փշրված սրտի գաղտնարաններում, որոշեց ապրել, համառորեն ապրել՝ ապրելու տենչը հսկա բեռ դարձրած, որոշեց ապրել՝ դրանով ապրեցնելով սիրասուն միևուրս որդուն:

մի քանիսը գետնով են նրա մասին գրված գրքում: Համլետը նաև լավ նկարում էր ու նա նաև...

-Լավ խոհարար էր, -ասում է Համլետի ազգականներից Մանուշակ Ալեքսանյանը.- մի օր եկավ մեր տուն, ես ծուկ էի ուզում տապակել: Ասաց՝ թույլ տուր իմ ձեռով ծուկը տապակել, կարելի՞ է: Եվ տապակեց: Մենք սովորաբար ձկան կտորները թաթախում ենք այլուրի մեջ, հետո տապակում: Նա այդպես չարեց, ձկան կտորները ձվի մեջ թաթախեց, հետո տապակեց: Այնքան համով -հոտով էր ստացվել...

Եվ կրկին հուշեր-հուշեր... Եվ ամեն մի հուշ ասես լրացնում-ամբողջական է դարձնում Համլետի կերպարը:

Հեռու- հեռավոր Շահունյանի շրջանի Թողան գյուղում արշալույսները հայերեն են բացվում, հայի սաղմոս է, հայի աղոթք, թեև թուրքն է հիմա այնտեղ ապրում: Հայոց հերոսների անմահ ոգին է աղոթքի «հեղինակը»: Եվ ոգին այդ արյան վրեժ է, ցասում: Եվ ոգին այդ Թողանից ասում է այս հողն իր իսկական տերն ունի, լսու՛մ եք : Տերը կգա...

ԱՆՎԱՐԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Բայանդուր-Վաղարուր գյուղի մասին

Հողվածը տպագրվում է վաղատուրքի-ների խնդրանքով՝ գյուղի վերաբնակեցման 100-ամյակի առիթով:

Հողվածի հատկապես զաղափարական ուղղվածության առնչությամբ վերապահումներ ունենք: Սակայն դա չի անդրադառնում նյութի սկզբնաղբյուրային նշանակության վրա:

Հողվածի հեղինակը հայտնի կուսակցական-պետական գործիչ Շմավոն Առուշանյանն է, ով 1954-63թթ. եղել է Հայաստանի գերագույն խորհրդի նախագահության նախագահ, ավելի վաղ՝ ԳԿԿ կենտկոմի քարտուղար, հանրապետության հողագործության, ավտոտրանսպորտի նախարար, Լեհիստանի քաղկոմի 1-ին քարտուղար:

Մինչև 1918 թվականը Բայանդուր գյուղը մտնում էր Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Չանգեզուրի գավառի Տեղի տեղամասի մեջ: 1918-ից գյուղը Հայաստանի 1-ին հանրապետության Չանգեզուրի գավառի մեջ էր՝ չհաշված 1920թ. հունիսից մինչև նոյեմբեր. այդ ժամանակ Չանգեզուրը սովետական էր: 1921 թվականի հուլիսից Բայանդուր գյուղը մտավ Հայկական ՍՍՀ Չանգեզուրի գավառի Գորիսի շրջանի մեջ: 1929 թվականից՝ գավառների վերացումից հետո, Գորիսի շրջանը Հայկական ՍՍՀ կազմում մնաց ինքնուրույն վարչական միավոր:

Բայանդուրը հայկական հին գյուղ է, ապացույցը գյուղում եղած երկու եկեղեցին է:

1918թ. գարնանը Բայանդուրում ապրող թուրքերը թողեցին գյուղը և տեղափոխվեցին Աղբյուրների Հանրապետություն:

1917թ. Չանգեզուր գավառի Մինքենդ, Չեյվա և Ալիոլի գյուղերի հայերը գաղթեցին իրենց գյուղերից ու բնակություն հաստատեցին Գորիսի շրջանի տարբեր գյուղերում: Երբ 1918թ. գարնանը Բայանդուրի թուրքերը թողեցին գյուղը և հեռացան Աղբյուրան, Մինքենդի, Չեյվայի և Ալիոլի գյուղերի հայերը տեղափոխվեցին Բայանդուր և այնտեղ հաստատեցին մշտական բնակություն:

Բայանդուրում ունի լավ սարեր՝ անասնապահության համար, հացահատիկային բերքատու դաշտեր, բավականաչափ ջրեր: Մի խոսքով կային պայմաններ աշխատելու և ապրելու համար:

Գյուղը բաղկացած էր երկու մասից՝ Հալաբից և Բայանդուրից:

Գյուղը զուրկ էր ժամանակակից ճանապարհներից: Ավտոմեքենայի, կոմբայնի մասին խոսք լինել չէր կարող: Տրանսպորտի միջոցը ձին, ջորին և ավանակն էին: Անգամ սայլեր չկային: Չկար դարձր, գյուղացին զուրկ էր էլեկտրական լույսից, ռադիոյից:

Գյուղում կար մեկ սենյակ, որ պատկանում էր մոլլա Մահմեդին, Հալաբում էլ մի կիսասենյակ, որ պատկանում էր մոլլա Հագուին, մնացածները քարատակեր են եղել, որտեղ ապրել են մարդիկ ու պահել անասունները:

Մինքենդիցները, գեյվացիները և ալիոլուցիները 1918թ. մայիսին Բայանդուր գյուղի քարատակերն ընտրեցին իրենց ապրելու վայր. լուսավոր սենյակի մասին չէին էլ մտածում, միայն ապրելու տեղ ունենային, թեկուզ՝ քարատակ:

Այսպիսի պայմաններում սկսեցին ապրել երեք գյուղի գաղթական հայերը:

1919 թվականը շատ նպաստավոր տարի էր գյուղատնտեսության համար: Դաշտերում աճել էր լավ հացահատիկ՝ չնայած մեծ մասը տարեկան էր, մարգագետիններում էլ բավարար անասնակեր կար: Գյուղի հասարակությունն ընտրեց մի համաձայնագրով, որը պարտավոր էր հացահատիկի ցանքատարածությունները և խոտատեղերը բաշխել եկած բնակիչներին: Համաձայն համաձայնագրի որոշման՝ հացահատիկի դաշտերը և խոտատեղերը բաշխվեցին ըստ շնչի:

Գյուղացիները ձեռք բերեցին մանգաղ, գերանդի, կամնը և այլ գործիքներ՝ հացահատիկի արտերը հնձելու և խոտը քաղելու համար: 5-6 ընտանիք էլ միացան ու ձեռք բերեցին մեկ գութան՝ վարուցանքսի համար: Աշնանացանի համար կատարեցին երեք: Ժամանակին հավաքեցին իրենց բաժին հասած խոտատեղի խոտը, հնձեցին ցորենի դաշտերը և կատարե-

ցին աշնանացան: Գյուղում սկիզբ առավ սովորական գյուղական կյանք:

Չանգեզուրի գավառում և նրա շրջաններում, գյուղերում դաշնակցությունը ստեղծեց իր օրգանները: Չանգեզուրի տերն ու տնօրենը 1918-1920թթ. դաշնակ Մելիք Յուլյանն էր, Դրոն, Նոյեմը և այլն: Բայանդուր գյուղում նշանակել էին վաշտապետ-կոմիսար, ուս միջոցով իրականացնում էին իրենց քաղաքականությունը: Կազմակերպել էին հեծելազորի մի խումբ՝ դարաբաղցի Աղաջանի հրամանատարությամբ, ով պետք է պաշտպաներ խանածախ, խոզնավար և Բայանդուր գյուղերն ու պետական սահմանը:

Գյուղացիները նախապատրաստված և կազմավորված անցկացրին 1919-ի գարնանացանը: Հետագայում կատարեցին բերքահավաքը, պատրաստվեցին ձմռանը: Գյուղացիները մտածում էին իրենց երեխաների պաշտպանության և խաղաղ կյանքի համար: Նրանք չէին մտածում իրենց հարեան թուրքական գյուղերը նվաճելու և կողոպտելու մասին: Մարդկանց հարկավոր էր խաղաղ կյանք ու աշխատանք:

Խմբապետ Աղաջանը Հալաբի արևմտյան մասում հողամաս էր վերցրել, որտեղ պահում էր իր հեծելազորը: Մի քանի անգամ հարձակվեց հարեան թուրքաբնակ գյուղերի վրա՝ նրանց անասունները թալանելու համար: Վերջապես հաջողվեց մի անգամ ոչխարների մեկ



հոտ թալանել, որի մեջ հաշվում էր մի քանի հարյուր գլուխ ոչխար: Խմբապետ Աղաջանը թուրքերին կողոպտում էր, հայերից էլ վերցնում հաց, վառելիք, անասնակեր և այլն ու այդպես պահում իր զորքը:

Գորիսի շրջանի գյուղերին շրջապատող թուրքաբնակ գյուղերի հետ ստեղծվել էր շատ վատ և վտանգավոր դրություն: Ամեն օր ընդհարումներ, կողոպուտ, իրար վրա հարձակում...

9 հոկտեմբերի 1919թ.

Լուսաբացին խոզնավար գյուղի կողմից սահմանից, սկսեցին գործել թմրամոլներն ու զնդագիրները: Մուսավաթական բանակը հարձակվեց Չանգեզուրի վրա՝ այն նվաճելու համար: Ռազմաճակատի գիծն էր՝ Կոռնիծոր-Տեղ-Արավուս-Բայանդուր-խոզնավար-Վերիվեն (Քաչալ դաղ): Ծանր դրություն էր ստեղծվել սահմանային այդ գյուղերի և Չանգեզուրի համար ընդհանրապես: Խոզնավար և Բայանդուր գյուղերը պետք է պաշտպաներ խմբապետ Աղաջանը: Խոզնավար գյուղի սահմանը պահում էին իրենք՝ խոզնավարցիները, իսկ Բայանդուրցիների համար նշանակված էին դիրքեր: Երբ մուսավաթներն առանց պատերազմը հայտարարելու հարձակվեցին Չանգեզուրի վրա, գեներալ ընդունակ մարդիկ ոտքի կանգնեցին իրենց երկրամասը պաշտպանելու համար:

Հոկտեմբերի 9-ին բոլոր տղամարդկանց հանցին ռազմաճակատ: Բայց չկարողացան դիմադրել, թշնամին ուժեղ էր, մուսավաթական կադրային զորամասեր էին կռվում: Օրվա վերջում խմբապետ Աղաջանն իր հեծելազորով Հալաբի առաջին ճանապարհով փախավ: Մուսավաթական բանակը նույն օրը գրավեց խոզնավարը, մի քանի մարդ սպանեցին և ժողովրդին լրիվ թալանեցին: Խոզնավարցիները եկան Բայանդուր: Թուրքական

բանակը շարունակեց հարձակումը Բայանդուրի ուղղությամբ: Գործում էին թմրամոլները, զնդագիրները, իրացանները: Խոզնավարի և Բայանդուրի բնակիչների համար ստեղծվել էր սարսափելի դրություն: Մուսավաթական բանակին հակահարված չէր տրվում: Խոզնավարի և Բայանդուրի բնակչությունը՝ տղամարդ, կին, անասուններ՝ խառնված իրար, գաղթեցին դեպի խանածախ՝ թողնելով ամեն ինչ իրենց տներում: Թուրքերը հրդեհեցին խմբապետ Աղաջանի խոտի դեզը, որը լուսավորում էր Հալաբի ծորը և ավելի մեծ սարսափ տարածում: Խոզնավարի և Բայանդուրի գաղթականներն ու շերտերն ու շարժվեցին դեպի Քարաշեն:

Չանգեզուրի ամբողջ ժողովուրդը գեներալի մոտ: Միսիանի շրջանից հետևակ, հեծելազոր շարժվեցին դեպի Քաչալ դաղ-սարը, նրանց օգնության հասան Թոփչի Սիմոնի լեռնային թմրամոլները, շրջանի մյուս գյուղերի զինված ուժերն օգնության հասան Տեղին, Կոռնիծորին: Սկսվեց իսկական հերոսամարտ: Թուրքական զորքը զխոսվին ջարդվեց և նահանջեց:

Դաշնակցական կառավարությունը Գորիսում ուներ լեռնային չորս թմրամոլ, զնդագրային մի զումարտակ և հեծելազոր՝ բաղկացած 100 հեծյալից:

Աշուն էր, սկսվել էին անձրևները և ցրտեղ: Խոզնավարի և Բայանդուրի գաղթական-

նում հաստատվել է սովետական կարգեր և կարմիր բանակի զորամասերը հասել են Ղարաբաղ ու շարժվում են դեպի Չանգեզուր:

1920թ. մայիս-հունիսին կարմիր բանակը մտավ Չանգեզուր: Գավառում հաստատվեց սովետական կարգեր:

Չանգեզուրի վրա ծածանվել էր սոցիալիստական հեղափոխության դրոշմը:

1920թ. հունիսին Բայանդուր գյուղում ստեղծվեց գյուղական հեղկոմ, որը ղեկավարում էր Պետրոս Արզումանյանը: Գյուղի հեղկոմն իր շուրջը համախմբեց ակտիվ, որը պայքարում էր սովետական կարգերի ամրացման համար:

Բայանդուրցիք խաղաղ պայմաններում հավաքեցին բերքը, կուտակեցին անասնակեր և սկսեցին ապրել առանց վախի:

Կարմիր բանակին էլ օգնում էին հացով, մսով, ձիերի համար տեղափոխում էին խոտ, գարի:

1920թ. նոյեմբերին Գորիսի շրջանի դաշնակցական կազմակերպություններն իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: Կարմիր բանակի զորամասերը նահանջեցին դեպի Աղբյուրան: Գյուղի հեղկոմը տեղյակ չէր խոտվության մասին և չկարողացավ անցնել Աղբյուրան: Դաշնակցական կառավարությունը գյուղերում ստեղծեց իր օրգանները: Բայանդուր գյուղում իշխում էր դաշնակցների վաշտապետ-կոմիսարը:

Դաշնակցները հետապնդում էին գյուղի հեղկոմի անդամներին և գյուղի ակտիվին, ովքեր օգնել էին սովետներին ու կարմիր բանակին, բայց դաշնակցներին չհաջողվեց նրանց ոչնչացնել: Դաշնակցների տիրապետության օրոք ավելի վատացավ գյուղացիների դրությունը:

Գյուղում տարածվեց քոսի հիվանդությունը, և ոչ մի բուժում չկար: Չկային նավթ, կտորեղեն, շաքար, լուցկի և այլն: Գյուղացիների համար ստեղծվել էր շատ ծանր դրություն: Չանգեզուրը կտրվել էր դրսի աշխարհից:

Հունիս-հուլիս 1921թ.

1921թ. ապրիլին Հայաստանում ջախջախվեցին դաշնակցական կառավարության մնացորդները: Հայաստանում ամրապնդվեցին սովետական կարգերը:

1921թ. հունիսին կարմիր բանակի զորամասերը Սովետական Հայաստանից և Սովետական Աղբյուրանից հարձակվեցին Չանգեզուրի զորամասերի վրա:

Երկրամասի վրա վերջնականապես ծածանվեց սոցիալիստական հեղափոխության դրոշմը:

Բայանդուրի գյուղացիները պատրաստվում էին աղ ու հացով դիմավորել կարմիր բանակի զորամասերին: Հունիսի վերջին հուլիսի սկզբներին արեւոտ օրեր էին, մարդկանց տրամադրությունը բարձր էր: Այդ ժամանակ Հալաբ են գալիս խոզնավարցիները: Հասկանալի չէր, թե ինչ է կատարվում: Գաղթական խոզնավարցիները հայտնեցին, որ կարմիր բանակ չկա, իրենց վրա հարձակվել են ինչ-որ թուրքական խմբեր և սկսել կոտորել: Բայանդուրում ստեղծվեց տագնապալի դրություն, բնակչության մեջ տարածվեց ահ ու սարսափ:

Բայանդուրցիները խոզնավարցիների հետ դիմեցին փախուստի: Թողեցին ամեն ինչ՝ անասուն, տուն, իրեր և մտածեցին իրենց կյանքը փրկելու համար: Հասան մինչև Քարաշեն. ապրում էին բաց դաշտում, սոված, ծարավ: Տանջալի օրեր էին այդ երկու գյուղի մարդկանց համար: Ստիպված ուտում էին ամեն տեսակ կանաչ: Բարեբախտաբար ամառ էր, եղանակը՝ տաք: Այդ ժամանակ խոզնավար և Բայանդուր ներխուժած զինված խմբերը թալանում են գյուղացիների ամբողջ ունեցվածքը և դարձնում գյուղերն ավերակ: Խոզնավարի և Բայանդուրի վրա հարձակման լուրը երբ հասնում է Չանգեզուրի գավառային հեղկոմ, անմիջապես միջոցներ են ձեռք առնում: Գյուղացիները վերադառնում են իրենց գյուղեր և տեսնում դատարկ ու ավերված քարատակեր: Վերջում պարզվեց, որ կարմիր բանակի անվան տակ հարեան թուրքաբնակ գյուղերից մի զինված խումբ հարձակվել է Խոզնավարի և Բայանդուրի վրա՝ գյուղացիներին թալանելու և գյուղերն ավերելու համար:



ԱՎՏՈՄԱՏ ԿԱՍ ՆՎԵՐ ՍՈՒՐԲ ԾՆՆՈՒՆ

էջ 6 (եկամուտները սահուն իջնում են), բայց պաշտոնական վարկածով մարդկանց եկամուտներն «ավելանում» են: Մարդը, եթե մի ժամանակ մեկ կգ կարգավորվի գնում, հիմա 4-5 հազար դրամ չի տալու, դրա դիմաց գնում է 20-25 կգ կարտոֆիլ: Արդյունքում ստացվում է 1:20-25-ի հարաբերությունը:

Իսկապես, նրա եկամուտը 20-25 անգամ աճեց, ու դա կատարվեց ավտոմատ կարգով:

Նույնը, իհարկե, այլ գործակցով, գործում է նաև տավարի ու խոզի մսի մասով, որոնք լավագույն դեպքում փոխարինվում են ներկրված արտասահմանյան հավերի տարիներով սառեցված բրեդով, կամ էլ գիտության վերջին նվաճումների հավելումներով ամրապնդված այլ-այլ մթերքներով: Քանակական աճն այստեղ եւս ակնհայտ է, անվիճելի:

Այ, սրա համար էլ մեր խորհրդարանականները խորհուրդ են տալիս կարտոֆիլ ուտել: Դու դեմ չե՞ք:

Ավտոմատ գարնանահրաշ դրսետրուսներ ունի: Վերջերս ամենաբարձր մակարդակով մեզ հայտարարվեց, որ չնայած աշխատավարձերի բարձրացում չի արվել ու չի արվելու, այնուհանդերձ, դրանք ավտոմատ բարձրանալու են՝ թե միջինի իմաստով, թե անհատական:

Դե եկ ու այս գլուխկոտրուկը լուծիր: Չես էլ կարող մտնել այս լաբիրինթոսի մեջ: Այդուհանդերձ, պարզվում է, որ որոշ յուրուտ օղակներում՝ հանք, գազ, էներգիա, հարկ, մաքս և այլն, իրենք իրենց պարզեցնում են, խրախուսում, տարատեսակ վճարումներ անում: Սրանց էլ գումարում են արտոնյալ վճարվող մյուս ոլորտները եւ արդյունքը բաժանում աշխատողների ընդհանուր թվի վրա: Ահա թե ավտոմատ աճ՝ համեստ 2-2,5 տոկոս: Բայց եւ այնպես աճ է, չէ՞, չնայած դրանից ներքեներում

գտնվող հոծ զանգվածների ոչ այնքան է բան տեսնում, ոչ էլ փորը բան ընկնում:

Այս տարվա պետական բյուջեի օրենքով որոշակի կրճատվել են կրթությանը եւ առողջապահությանը հատկացվող դրամական միջոցները:

Մարդիկ վախ ունեն, որ կիջնեն մանկավարժի, բժշկի եկամուտները, կտուժեն բնագավառների գործերը: Իշխանությունները ոչ միայն հավաստիացնում, այլև նաև օրը ցերեկով պնդում են, որ ամեն ինչ ավելի է լավանալու: Ու դա կատարվելու է ավտոմատ կերպով: Ակամա մտածում ես, գուցե բյուջեն էլ պակասեցնենք, եւ ժողովուրդը սկսի լավ ապրել:

Բայց, ա՛յ, ժողովրդի կյանքի որակի բարելավման մի հետաքրքիր ծես էլ կա, ճիշտ է նոր է, բայց արժե ուշադրություն դարձնել:

Երկրի պետությունների քննարկումների ընթացքում ֆինանսարարի, կառավարության եւ երկրի առաջին դեմքերի շուրթերից բազմիցս հնչեց, որ 2018թ գազի գին չի բարձրանա, այսինքն, ավտոմատ կանգնեցնում են:

Պատկերացնում եք, եթե այն գործեր, մեր վիճակը ինչ կլինեն:

Լավացած կյանքի որակը: Իհարկե:

Դու դեմ չե՞ք: Ականջդ կանչի պարոն Դուլյան:

Չնայած մեզ մոտ կտրուկ աճել են բենզինի ու դիզելային քաղցրեղենի գները, բայց դրանցից չեն բարձրանա ավարանքների գները: Մեզ մոտ այդպես է, հետո ի՞նչ, թե աշխարհում միշտ հակառակն է լինում: Մերն ուրիշ է:

Ավտոմատի արմատները խորն են: Խորությամբ ու լայնությամբ այն լիարժեք գործել է Տիգրան Սարգսյանի, ինչպես նաև Դավիթ Աբրահամյանի կառավարությունների օրոք: Սրանց օրերում Սերգո Կարապե-

տյան մի գյուղնախարար կար, ով ավտոմատը վարժ բանեցնող էր:

Տասնամյակների իմ հարուստ փորձը հուշում էր, որ մեր դաշտերում հացահատիկի հեկտարից 10-12ց միջին բերքը գտած բան է (ի դեպ գյուղացին էլ Աստուծոն փառք էր տալիս դա ունենալ), ինքը մարդի միջին էր հանում 33-35ց: Նույն էլ անում էր հանրապետությունում:

Մտքում տարեկան ցանքեր էր ավելացնում:

-Պարոն Կարապետյան, ասի արդյունքները վարելահող չունենք, գանգատվում էր գյուղացին: -Աճ ապահովե՞ք, պահանջում էր նախարարը:

Ավտոմատի հաշվին ցանքերի հետ մեկտեղ ինչքան անասունների գլխաքանակ ավելացավ, ծիրանի, դեղձի, խաղողի, տարատեսակ բանջարեղենի արտադրություն աճեց՝ ասելը հարկավոր չէ: Կարո՞ղ ես, հաշվիր:

Այդ տարիներին ավտոմատը բավական հաջող գործում էր նաև հալառակ ուղղությամբ՝ հատկապես շինարարության մեջ: Առանց որևէ ջանք գործադրելու տարեկան 10-15 տոկոս անկումը պատրաստ էր:

Ավտոմատ էր տեղի ունենում նաև բնակչության արտահոսքը:

Կարելի է այսպես անվերջ շարունակել: Բայց սպասեք: Մի բան է վատ:

Չունյա չունենաք, ավտոմատ չեն լուծվելու ոչ աշխատատեղերի, ոչ արտահոսքի կանխման եւ 4մլն բնակիչ ունենալու, ոչ էլ մարդկանց բարեկեցության հարցերը: Այդպես չեն վերանալու նաև հովանավորչությունը, կոռուպցիան ու մանատիպ մյուս ախտերը:

Վերջին 2,5 տասնամյակի մեր երկրի փորձով դա ավտոմատ հաստատվել է:

ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ՝ Ս.Բ.ՎԱՐՊԱՆՅԱՆ Գ.ԳՐԻԽ

Կորել է
Աղշալույս Անդրանիկի Մարտիրոսյանի Դ- N003833 դիպլոմը՝ տրված 1982 թվականին Ղափանի շինարարական տեխնիկումի կողմից:
Համարել անվավեր:

Բայանդուրցիները վերադարձան գյուղ: Վերջապահ ահն ու սարսափը, ազգամիջյան կոտորածները, թշնամությունը հայերի ու թուրքերի միջև:

Կոմբեյիցի եւ կոմսոմոլի բռնությունները ստեղծումը

1921թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին գյուղում ստեղծվեց կոմբեյի: Գյուղ էր եկել կուսշրջկոմի հրահանգիչը: Հայաքի եկեղեցու մոտ՝ կալում, հրավիրվեց գյուղացիների ընդհանուր ժողով: Կուսշրջկոմի հրահանգիչը զենուցեց կոմունիստական կուսակցության դերի ու անելիքների, ապա գյուղում կոմբեյից կազմակերպելու մասին: Եղան հարցեր գյուղացիների կողմից, որին պատասխանեց հրահանգիչը: Գյուղացիներից 34 հոգի ցուցակագրվեց կոմունիստական կուսակցության շարքերը մտնելու համար:

Կոմբեյիցի քարտուղարի համար եղան մի քանի թեկնածու: Ընտրվեց Սիմոն Առուշանյանը: Այսպիսով գյուղից ընտրվեցին հետ սկսեց աշխատել նաև գյուղի կոմբեյիցը:

1921թ. վերջում անցկացվեց կուսշարքերի գումը: Բայանդուր գյուղում կուսշարքերի գումը սկսվեց 1921թ. նոյեմբերին: Կուսակցության շարքերից հեռացվեց 12 հոգի:

Կոմբեյիցի ստեղծումից հետո

կազմակերպվեց նաև կոմսոմոլի բռնությունները: Գյուղի երիտասարդների առաջին ժողովը, որին մասնակցում էր ավելի քան 40 հոգի, որոշեց ստեղծել կոմսոմոլի բռնություն: Ցուցակագրվել էին 30-ից ավելի երիտասարդ: Կոմսոմոլի բռնությունները ընտրվեց Ծամվոն Առուշանյանը, ով աշխատեց մինչև 1925 թվականը:

Ինչպես կոմբեյիցի, այնպես էլ կոմսոմոլի բռնությունները, այնպես էլ կոմսոմոլի բռնությունները, կոմսոմոլի բռնությունները կազմակերպությունը միասին ծավալեցին քաղաքական-մասսայական աշխատանք գյուղի աշխատավորների շրջանում եւ նրանց համախմբեցին կոմունիստական կուսակցության եւ սովետական կառավարության շուրջը: Այն ժամանակ գյուղի առջեւ դրված էին նաև այլ խնդիրներ: Գլխավոր խնդիրն էր վերականգնել քայքայված տնտեսությունը, բարձրացնել գյուղատնտեսությունը:

Բայանդուրցիները սկսեցին անասուններ ձեռք բերել, վարուցանքս անել եւ աշխատում էին բարձրացնել

իրենց տնտեսությունը: Այդ նրանց հաջողվեց: Բայց գյուղացիները մնում էին նույն քարատակերում, չկային ծանապարհներ, էլեկտրական լույս, ռադիո, դպրոց եւ այլն: Մարդիկ մտածում էին միայն շատ անասուններ ունենալ, վարուցանքս կատարել եւ ապրել ու սոված չմնալ:

Գյուղի կազմակերպությունների առջեւ դրված էր նաև այլ խնդիր՝ ժամանակին հավաքել հարկերը, կարիքավորներին օգնել վարկերով անասուններ եւ սերմացու գնելու համար:

Գյուղից ընտրվեցին աշխատեց մինչև 1922 թվականը: Այդ ժամանակ անցկացվեց սովետների ընտրություններ: Բայանդուր գյուղում ընտրվեց գյուղական սովետ: Հեղկոմը դադարեց գոյություն ունենալուց: Սովետների ընտրությունները կատարվում էին բաց գյուղացիների ընդհանուր ժողովում, շրջանային, գավառային համագումարներում եւ այլն:

Գյուղական սովետի, կոմբեյիցի եւ կոմսոմոլի բռնությունները առաջ ելուր տարի նոր խնդիրներ էին դրվում: Առաջնահերթ խնդիրներից մեկը գյուղում անգրագիտության վերացումն էր: Գյուղացիների մեծ մասն անգրագետ էր: Գյուղում 4-5 հոգի ունեին հիմնական կրթություն: Չկային գրականություն, գրեական պիտույքներ:

Հաստատված է «Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ Խորհրդի 28.05.18թ. նիստում խորհրդի նախագահ՝ Դ. Ալեքսանյան

Շ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ

«Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ բաժնետերերը հրավիրվում են մասնակցելու « Կապանի մեքենաշինական գործարան » ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին, որը տեղի կունենա ընկերության վարչական շենքում (ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային 20) 2018թ. հունիսի 29-ին ժամը 16.00-ին:

Տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվելու վերջին ժամկետը՝ 25.06.2018թ. ժամը 11.00-ն է:

Տարեկան ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված են հետևյալ հարցերը.

1. Ընկերության գործունեության մասին տնօրենի հաշվետվությունը:
2. Ընկերության գործունեության հաշվետվությունների, հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի հաստատում:
3. Շահույթների և վնասների բաշխման հաստատում:
4. Խորհրդի և վերահսկիչ հանձնաժողովի ընտրություն:
5. Շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունում:
6. Անդիտորի ընտրություն:

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում, օրակարգային հարցերին վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու և ստանալու համար բաժնետերերը կարող են դիմել ընկերության խորհրդին (ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային 20) հունիսի 18-ից մինչև 25-ը, աշխատանքային օրերին ժամը 11.00-ից մինչև 15.00-ն:

Մանվել Գրիգորյանը զրկվեց Կապանի պատվավոր քաղաքացու կոչումից

Հուլիսի 20-ին հրավիրված Կապան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգում երկու հարց էր ուժը կորցրած ճանաչել Կապան համայնքի ավագանու 2003թ. սեպտեմբերի 11-ի «Մանվել Սեկտորի Գրիգորյանին Կապանի համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին» N 95- Ա որոշումը եւ Մանվել Սեկտորի Գրիգորյանին Կապան համայնքի պատվավոր քաղաքացու կոչումից զրկելու որոշումը: Օրակարգի երկու հարցին էլ Կապանի ավագանու անդամները միաձայն կողմ քվեարկեցին:



Նախօրեին Կապանի համայնքապետարանում կայացել էր համայնքի ղեկավարին կից հանրային խորհրդի նիստ, որին մասնակցում էին տարբեր տարիների ավագանու անդամներ,

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

Անգրագիտության վերացման համար գյուղում առաջին փորձն արվեց 1923 թվականին: Գյուղսովետը եւ կոմբեյիցը որոշեցին գյուղում կազմակերպել անգրագիտության վերացման կետ՝ լիկայան: Գյուղի միակ սենյակը (մոլլա Մահմեդի սենյակը), որը զբաղեցնում էր Բաբայան Ջաքարը, հատկացվեց լիկայանին: Սեղան-նստարան չկային: Տախտակից պատրաստվեցին նստարաններ: Չեք բերվեցին տետրեր, մատիտներ եւ առաջին դասարանի համար գրեք: Պարասպաններն սկսեցին գյուղում եղած հիմնագրային կրթություն ունեցողները: Ավելի քան երեսուն հոգի ընդգրկված էր լիկայանում. բոլորը երիտասարդներ էին: Յուրաքանչյուր ոք ցանկանում էր սովորել, բայց չկային պայմաններ: Լիկայանով հիմք դրվեց անգրագիտության վերացմանը...

քական ուսուցման խմբակ, որտեղ ընդգրկված էին բոլոր կոմունիստները, կոմերիտականները եւ անկուսակցական ակտիվը: Պարասպաններն ընթանում էին երեկոյան լիկայանին հատկացված սենյակում, նավթի ճրագի լույսի տակ:

Գյուղում այդ ժամանակ կոլխոզ չկար, կազմակերպվել էր փոխադարձ օգնության կոմիտե, որը կարիքավոր գյուղացիներին օգնում էր ձեռք բերելու անասուններ, սերմացու եւ այլն: Գյուղացիները զբաղվում էին անասնապահությամբ, վարուցանքով:

1922 թվականից գյուղացիները սկսեցին նաև զբաղվել այգեգործությամբ:

Չկա հին Բայանդուրը, կա նոր Վաղատուրը՝ վերափոխված: Գյուղում կա կոլտնտեսություն, կաթիպանրի գործարան, ութամյա դպրոց, ակումբ: Գյուղն ունի ավտոմոբիլային: Աշխատում են մարդատար եւ ապրանքատար մեքենաները: Ոչ ոք չի ապրում քարատակում: Վաղատուրի բնակիչներն ապրում են լուսավոր բնակարաններում, որտեղ կան էլեկտրական լույս, ռադիո, շուտով կլինի նաև հեռուստատեսություն:

ՇՆԱՎՈՆ ԱՈՒՇԱՆՅԱՆ 13.10.1970

Գորիսի պետական համալսարանում. փոթորիկ՝ ոչնչից

էջ 2 ուռուցքաբանության համար կարևոր նշանակություն ունեցող այդ թեմայի հայտատուն քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռազմիկ Վարդանյանն է, բ) թռչող սարքերի եւ ռոբոտների նախագծում, դեկավարում (հայտատու՝ ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտյուշա Ղուկասյան), գ) տարածաշրջանի ջրերի էկոլոգիական վիճակի հետազոտում (հայտատու՝ Շուշան Շալունց, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ):

Այնուհետև քննարկվեց հայագիտությանն առնչվող թեմայի վերաբերյալ ներկայացված երկու հայտի ճակատագիրը: Մեկի հեղինակը Մարտին Ջիլֆուդարյանն է, մյուսինը՝ Միեր Քունունցը:

Երկու հայտից մեկին պետք է նախապատվություն տրվեր եւ ներկայացվեր գիտության պետական կոմիտե: Երկուսը միաժամանակ ներկայացնել հնարավոր չէր, քանզի նրանց վերնագրերը բառացիորեն կրկնում են միմյանց, գրեթե նույնն են թեմայում ընդգրկված գիտաշխատողները, որոնց մի մասը, ի դեպ, տեղյակ չէր նույնիսկ, որ միաժամանակ ընդգրկված է երկու հայտի մեջ:

Համալսարանի ղեկավարը մինչ քննարկումն առաջարկել էր երկու հայտատուին՝ միավորվել եւ առավել կենսունակ դարձնել ծրագիրը, ավելի ստույգ դարձնել ակնկալվող արդյունքը, ընդ որում՝ հայտերի հեղինակներից մեկը կլիներ թեմայի գիտական ղեկավար, մյուսը՝ ղեկավարի տեղակալ: Ողջամիտ այդ առաջարկությունը մերժվեց. հայտերի գիտական ղեկավարները պատրաստակամություն չհայտնեցին աշխատել իրար հետ:

Մի հանգամանք եւս. երկու հայտը գիտխորհրդում քննարկելուց առաջ պետք է քննարկվեր Ռազմիկ Վարդանյանի գլխավորած հանձնաժողովում (Գորիսի պետական համալսարանի գիտական խորհրդին առընթեր մրցութային, ուսումնամեթոդական եւ գիտական հարցերի մշտական հանձնաժողով): Հենց այդ հանձնաժողովն էլ առաջնայություն պետք է տար հայտերից մեկին:

Ցավոք, հարգելի պրոֆեսորի, պատկառելի գիտնականի գլխավորած հանձնաժողովը չի կատարել պարզազույն այդ խնդիրը՝ չարտահայտելով դիրքորոշում, հարցը չուսումնասիրված, չզննարկված, չփորձաքննված եւ հուն վիճակում տեղափոխելով գիտական խորհուրդ: Ահա եւ հանձնաժողովի որոշումը, որը, ներող եղեք, անհեթեթության դասականն ունի է՝ «...Ներկայացված երկու հայտի շուրջ ծավալված բանավեճի արդյունքում հանձնաժողովը կոնկրետ որոշում չի կայացրել՝ 2010 թվականից ծրագրի գործող ղեկավար Մ. Ջիլֆուդարյանի եւ նույն թեմայով հայտ ներկայացրած, ԳՊՀ աշխատակից Մ. Քունունցի վեճի ու անհամաձայնության պատճառով: Հայտերը չեն դրվել քվեարկության: Հարցը թողնվել է գիտական խորհրդի քննարկմանը»:

Եւ ուրեմն՝ ոչնչից փոթորիկ չէր բարձրանա,

կրքերի անհմաստ բորբոքում տեղի չէր ունենա, գործը չէր տուժի, եթե համապատասխան հանձնաժողովը չխուսանավեր, չխուսափեր պատասխանատվությունից եւ զնահատական տար հայտերին:

Ըստ էության հարցի քննարկումն ի սկզբանե տեղափոխվել է անձնական հարաբերությունների ոլորտ. Մարտին, թե՛ Միեր, փոխարենը պատասխանելին մեկ այլ հարցի՝ հայտերից ո՞ր մեկն է ավելի լավը, գիտականորեն հիմնավորվածը:

Գրեթե նույն մոտեցումը նկատեցինք գիտխորհրդի որոշ անդամների մոտ: Օրինակ,



Գորիսի պատմության ճանաչված մասնագետ Սերգեյ Հախվերդյանն անկեղծորեն բարձրաձայնեց՝ «**Ես չեմ մասնակցի քվեարկությանը, որպեսզի որեւէ մեկին դեմ չքվեարկեն**»: Ու չմասնակցեց ...

Ռազմիկ Վարդանյանի եւ մյուս հանձնաժողովականների պաշտոնական բացատրությունը, թե հանձնաժողովում համապատասխան մասնագետներ չեն եղել, ինչի համար էլ հնարավոր չի եղել թացը չորից ցրել, որեւէ քննադատության չի դիմանում:

Հանձնաժողովը կարող էր եւ իրավունք ունենալ կազմավորել մասնագիտական ինչ-որ խումբ եւ նրա օգնությամբ որոշել՝ որն է առավել հաջողված հայտը:

Ավելին ասենք՝ տպավորություն ստացանք, որ հանձնաժողովի անդամներից, ինչպես եւ գիտխորհրդի անդամներից ոմանք ծանոթ չեն հայտերի բովանդակությանը: Ասել է թե՛ հարցը գիտխորհուրդ է բերվել այնպես, որ բանավեճը, տարածայնություններն անխուսափելի լինեն...

Իհարկե, հնչեցին նաեւ բազմաթիվ ողջամիտ ելույթներ, առաջարկություններ (Արտյուշա Ղուկասյան, Մալիկ Թելունց, Աշոտ Մարտիրոսյան), բայց առաջարկություններից ոչ մեկը հավանության չարժանացավ:

Սուսաննա Պետրոսյան ուսանողուհին ու շագրավ դիտարկում արեց՝ «Տարիներ շարունակ թեման ղեկավարել է Մարտին Ջիլֆուդարյանը, բայց ոչ մի անգամ դժգոհություն չի հայտնվել նրա գործունեության վերաբերյալ, իսկ հիմա փորձում ենք նրան գրկել ծրագիրը շարունակելու հնարավորությունից»:

Մեկ ուրիշն էլ, թե՛ «**Թող նոր եւ թարմ ուժեր ընդգրկվեն ծրագրում**»:

Մամուլի վերոնշյալ հրապարակման մի նկատառում հաշվի առնելով՝ կարծիքներ հայտնվեցին երկու հայտատուի կրթության առնչությամբ՝ որքանով է նրանց կրթությունը համապատասխանում հայագիտական այդ թեմայի ուսումնասիրումը ղեկավարելու առաքելությանը, Մարտին Ջիլֆուդարյանն իրավագետ է, Միեր Քունունցը՝ հայոց լեզվի եւ գրականության բանասեր, թուրքագետ:

Գիտխորհրդի անդամները, ի վերջո, դա խոչընդոտող հանգամանք չհամարեցին:

Գիտական առումով հիմնավորված ու շահեկան էր Արտյուշա Ղուկասյանի առաջարկությունը, որ կարելի է նույնիսկ խնդրի սողմունյան լուծման տարբերակ համարել. երկու հայտը միավորել եւ մեկ ուժեղ հայտ կազմել ու թիմը բաժանել երկու ենթախմբի՝ երկու գիտական ղեկավարով, որը եւ կիսբաներ առողջ մրցակցությունն ու երաշխիքներ կապահովեր լավագույն արդյունքների համար:

Սակայն այդ առաջարկությունը նույնպես (դարձյալ երկու հայտատուի անհամաձայնության պատճառով) չընդունվեց:

Գիտխորհուրդն ի վերջո այլ եզրակացության եկավ. ներկայացված երկու հայտն ուղարկել ՀՀ ԳԱՎ փորձագիտական քննության, որից հետո լավագույն հայտն ուղարկել գիտության պետական կոմիտե:

Մոտ երեք ժամ տեսած բանավեճի ընթացքում, որքան էլ տարօրինակ է, պատշաճ խոսք չհնչեց հայտերի գիտական բովանդակության մասին, թեև քանիցս առաջարկություններ հնչեցին՝ հարցի քննարկումը տեղափոխելու անհրաժեշտ հուն:

Բանավեճի առանցքում, ըստ էության, երկու անձնավորության՝ Մարտին Ջիլֆուդարյանի եւ Միեր Քունունցի մրցակցությունն էր:

Մեկ ուրիշ նկատառում էլ. եթե թեմայի նախկին ղեկավարից հրաժարվելու անհրաժեշտություն է առաջացել, ապա կարելի էր նախապես մրցույթ հայտարարել, եւ Սյունիքի մարզում կզտնվեին ուրիշ մարդիկ եւս, ովքեր նույնպես հայտ կներկայացնեին:

Եվս մեկ դիտարկում. կարծում ենք արժեք մասնագիտական ակտիվ խոսակցություն ծա-

վալել թեմայի ուղղությամբ ութ տարվա ընթացքում կատարված աշխատանքների մասին, թեև ռեկտորն իր խոսքում գոհություն հայտնեց կատարված աշխատանքների վերաբերյալ: Համալսարանի գիտական քարտուղար Թեմիմյան Մարությանն էլ դրականորեն գնահատեց տարիների ընթացքում կատարված աշխատանքը:

Ինչպես նշեցինք, գիտխորհրդի նիստի աշխատանքը սկսելիս Արտյուշա Ղուկասյանը ներկաներին համերաշխության, ինչպես եւ խնդիրը գիտական քննարկման տիրույթից դուրս չբերելու կոչ արեց: Սակայն կրքերը հանդարտեցնել ոչ միշտ հաջողվեց: Եւ այդ ամենի համապատկերի վրա դրվատելի էր ռեկտորի զսպվածությունը, բարեկիրք խոսքը, համերաշխությունը, խնդիրն անձնական տիրույթից գիտական տիրույթ տեղափոխելու ջանքերը: Մեկ հարց, այդուհանդերձ, մնաց թերորոշ կկարողանա՞ Արտյուշա Ղուկասյանը հայտերի ներկայացման համար վերջնաժամկետ սահմանված հունիսի 15-ից հետո վիճահարույց հայտը ներկայացնել գիտության պետական կոմիտե, ինչի առիթով քանիցս անհամաձայնություն հայտնեց:

Օրակարգային հարցերը քննարկելուց հետո հայտարարությամբ հանդես եկավ համալսարանի արհկոմի նախագահ Համլետ Հովսեփյանը. խոսքն այն մասին էր, թե ինչու արհկոմի նախագահը համալսարանի գիտխորհրդի կազմից դուրս է բերվել: Այդ հարցով նա դիմեց նաեւ «Սյունյաց երկրին», որին թերթը կանդադարանա առանձին:

Հ.Գ. 1
Գիտխորհրդի հունիսի 14-ի նիստը ծախողվելու առիթով Գորիսի պետական համալսարանի ռեկտորը նամակ է հղել Գորիսի համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանին, որի մեջ նշվում է. «**Խնդրում ենք Ձեզ տալ պարզաբանում, թե համայնքապետարանի մամուլի խոսնակ Իրինա Յոլանդ, հրավիրված չլինելով եւ չուներնալով համապատասխան փաստաթուղթ, ի՞նչ իրավասությամբ է ս.թ. հունիսի 14-ին՝ ժամը 15-ին, տեսանկարահանողի ուղեկցությամբ ներկայացել Գորիսի պետական համալսարանի նիստերի սրահ՝ գիտխորհրդի նիստը տեսանկարահանելու եւ լուսաբանելու կանխատարամադրվածությամբ:** Արդյո՞ք նա համայնքապետարանի հանձնարարականով է ներկայացել. եթե այո, ապա ի՞նչ նպատակ է հետապնդել նրա գործուղումը ԳՊՀ, եւ ինչու՞ այդ մասին նախապես մեկ տեղյակ չէք պահել: Եթե անձնական նախաձեռնությամբ է ներկայացել, ապա խնդրում ենք պարզաբանել, թե ի՞նչ մոտիվներ է նա ունեցել: Նման այց ԳՊՀ նիստերին, առանց համապատասխան հիմնավորումների, տեղի է ունենում երկրորդ անգամ»:

Հ.Գ. 2
«Սյունյաց երկիր» խմբագրակազմը պատրաստ է, անհրաժեշտության դեպքում, մասնակցել Մարտին Ջիլֆուդարյանի եւ Միեր Քունունցի հայտերի գիտական փորձաքննությանը:

ՍՄՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ավանդույթը չխախտվեց

Կապանի երաժշտասեր հասարակությունը հունիսի 15-ին ներկայ գտնվեց Կապանի արվեստի պետական քոլեջի դասախոս Լիաննա Մելիք-Ստեփանյանի մենահամերգին, որ տեղի ունեցավ Ա.Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցի դահլիճում: Առաջին մենահամերգը դաշնակահարուհին ունեցել է 20 տարի առաջ՝ 1998 թվականին, երբ սովորում էր Կապանի թիվ 1 երաժշտական դպրոցի ավարտական դասարանում:

Դեռեւս այդ ժամանակ բարդ ծրագրով էր ներկայացել հանդիսականին՝ դաշնամուրային կատարողական արվեստում խոսք ասելու հայտ ներկայացնելով:

-Տասը տարուց ավելի է, ինչ պարբերաբար հանդես եմ գալիս կապանցի հանդիսատեսի առջեւ, եւ կարծես տարիների ընթացքում ձեւավորվել է ունկնդիրների շրջանակը: Պարզապես պարտավորված եմ զգում իմ հանդիսականի համար



ելույթ ունենալ: Այս տարի խորագիր չունի իմ համերգը: Պատահել է, որ այն նվիրված է եղել նշանավոր մարդկանց կամ իրադարձությունների: Այս անգամ էլ ցանկացա պահպանել իմ՝ հանդիսականին հանդիպելու ավանդույթը, քանզի դասական երաժշտությունը հարգի է Կապանում, եւ այդ երաժշտության կոլորիտը պահպանելու խնդիր կա մեզանում, -մենահամերգից առաջ «Սյունյաց երկրին» ասաց դաշնակահարուհին:

Այս անգամվա համերգային ծրա-

գիրը եւս հարուստ էր՝ էնրիկե Լեկուոնա, Ֆիլիպ Գլաս, Իսահակ Ալբերնիս, Կոմիտաս, Արամ Խաչատրյան, Ռախմանինով: Դաշնակահարուհին բարձր վարպետությամբ մատուցեց նշված կոմպոզիտորների ստեղծագործությունները: Թերեւս նորություն էր նրա հնչեցրած կոմիտասյան երգերի դաշնամուրային մշակումները: Հանդիսականը ջերմ ծափողոյուններով ու ծաղիկներով վարձահատույց եղավ դաշնակահարուհուն՝ բարձրակարգ կատարման համար:

ՎԱՐՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱԺՈՒԿ ՊՍԱՍՏԻՄԱՍՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽԱՐԱԳԻՐ՝
ՍՄՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Գապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Ռոթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Լյուրերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ՕԱՆՈՒՑՈՒՄ» բաժնու լուսագրվող մյուսերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR-407

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 21.06.2018թ.: